Կույս Մարիամ. Խաբեբան նույնպես նախապատրաստվում է Նախազգուշացմանը

Շաբաթ, 1 հոկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ 08:30

Զավակս, աղոթիր այն բոլոր հոգիների համար, ովքեր մերժել են Իմ Որդուն և հպարտանում են դրանով:

Ժամանակը մոտենում է մինչ Իմ Որ դին մեկ անգամ ևս փորձում է փրկել աշխարհը դատապարտումից: Կարևոր է, զավակս, որ դու շարունակես հնազանդ լինել ամեն բանում, որ քեզնից խնդրում է Իմ թանկագին Որդին:

Նա տառապում է և ցանկանում է փրկել ձեզ բոլորիդ Խաբեբայի ճանկից: Նա՝ Խաբեբան, նախապատրաստվում է Նախազգուշացմանը: Մինչ Իմ որդին Իր գթասրտությամբ կսկսի փրկել բոլորի հոգիները, Նա՝ Խաբեբան, կփորձի համոզել նրանց, թե Նախազգուշացումը պատրանք էր:

Սատանային պետք է արգելել այդ ոչինչ չկասկածող հոգիներին գողանալուց: Պահեք նրանց ձեր բոլոր աղոթքների մեջ, քանի որ նրանք ամենաշատն ունեն ձեր աղոթքների կարիքը:

Ձեր օրհնյալ Մայր

Երկնքի Թագուհի

Ուրախացեք, երբ երկինքը պայթի, քանի որ կիմանաք, որ Ես գալիս եմ

Կիրակի, հոկտեմբեր 2, 2011թ, ցերակվա ժ 03:00

Իմ սիրելի աղջիկ, եղանակի ձևերը փոխվում են հիմա, որը ևս մի նշան է այն բանի, որ ժամանակները փոխվելու են: Կզգացվեն նաև այլ փոփոխություններ: Արևը կսկսի բաբախել (պուլսացիա) և պտտվել դեպի երկիրը, մինչ այն նախապատրաստվում է Նախազգուշացման համար:

Սկզբում կհայտնվի Իմ խաչը: Նրանք շոկի մեջ կլինեն, բայց սա տրվում է որպես մի նշան, որպեսզի կարողանաք նախապատրաստել ձեր հոգիները և թողություն խնդրեք ձեր կատարած մեղքերի համար: Այս անելով, դուք չեք տառապի Նախազգուշացման ընթացքում:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք: Իմ հետևորդներ ամենուր: Ուրախացեք, երբ երկինքը պայթի, քանի որ կիմանաք, որ Ես իսկապես գալիս եմ աշխարհ: Վերջապես

մարդկությունը ի վիճակի չի լինի մերժել Ինձ: Իմ սերը կճառագի աշխարհի յուրաքանչյուր անկյունում, մինչ Ես կփորձեմ մոտենալ բոլոր հոգիներին ամենուր:

Այնքան անսպասելի կլինի այս իրադարձությունը, որ աշխարհը կանգ կառնի մեծ շոկի մեջ: Երբ դանդաղորեն ուշքի կգան, շատերը դեռևս վստահ չեն լինի տեղի ունեցածի վրա: Ինչպես Ես եմ գալիս, կգան նաև Սատանան և իր չարքերը դժոխքից, ովքեր կփորձեն կլանել Իմ զավակների հոգիները: Ահա թե ինչու Ես պետք է կոչ անեմ ձեզ բոլորիդ, որ ձեր տան մեջ օրհնած ջուր ցանեք և ամենուր ունենաք օրհած մոմեր: Դուք պետք է ձեզ պաշտպանված պահեք:

Այնուհետև, Ես ձեզնից խնդրում եմ հետևյալը. Աղոթեք բոլոր նրանց համար, ովքեր չեն կարողանում իրենց սրտերի մեջ գտնել Իմ ուսուցումների ճշմարտության ընդունումը: Հատկապես աղոթեք նրանց համար, ովքեր հսկայական ջանքեր են գործադրում Ինձ մերժելու համար, չնայած տեղյակ են իրենց փրկելու համար Իմ խաչվելուն:

Հիշեք, Ես մեռա ձեզնից յուրաքանչյուրի համար, որ փրկեմ ձեզ: Հիշեք, որ այս անգամ Ես եկա նորից, որ ձեզ փրկեմ, յուրաքանչյուրիդ: Ես ոչ մեկին չեմ բացառում:

Հիմա դուք հնարավորություն ունեք, զավակներս, վստահանալու, որ տեղ ունեք երկրի վրա խաղաղության դարաշրջանում: Ինչու՞ չեք ցանկանա լինել սրա մի մասը: Ինչու՞ պետք է որևէ մեկը գիտակցաբար ընտրի դժոխքի խորքերը այս մեծ ընծայի փոխարեն:

Ուրախացեք, աղոթեք: Շնորհակալություն հայտնեք Հայր Աստծուն իր մեծ նախազգուշացման համար: Սիրով և ուրախությամբ գրկեք այս ընծան ձեր սրտերի մեջ:

Ձեր Փրկիչ

Հիսուս Քրիստոս

The Warning is a form of Global Confession (not found)

Ես երբեք չեմ լքի ձեզ, զավակներս: Ահա թե ինչու եմ Ես գալիս:

Երկուշաբթի, հոկտեմբեր 3, 2011թ, ցերակվա ժ 12:30

Իմ սիրելի աղջիկ, Ես խոսում եմ քեզ հետ այսօր, որ հասկանաք թե ինչ է Նախազգուշացումը և ցրեք դրան վերաբերող ցանկացած խառնաշփոթություն:

Շատերն են վախեցած և հավատում են, թե դա Դատաստանի Օրն է: Բայց դա այդպես չէ: Դա կլինի Աստվածային Գթասրտության մի Փառահեղ օր, որը կպարուրի ողջ աշխարհը: Իմ գթասրտության ճառագայթները կհեղվեն յուրաքանչյուր հոգու վրա՝ տղամարդու, կնոջ և երեխայի: Ոչ մեկը դուրս չի մնա: Ոչ մեկը:

Սա է Իմ վերադարձը, որ փրկեմ ձեզ մեկ անգամ ևս: Մի՞թե չգիտեիք, որ Ես գթասիրտ եմ լինելու: Որ Ես երբեք չեմ սպասի մինչև Վերջին Դատաստանը՝ առանց մեկ անգամ ևս փորձելու փրկել ձեզ բոլորիդ:

Սա է այն մաքրագործումը, որի մասին Ես խոսել եմ: Դեպի այս մեծ իրադարձությունը գնալիս աշխարհն անցնում է մաքրագործման միջոցով վերջին մի երկու տարիների ընթացքում: Ես թույլ տվեցի, որ մարդկությունը տառապի կորստից և խոնարհություն ձեռք բերի ֆինանսական շուկաների գլոբալ անկումից, չնայած Ես չեմ դա առաջացրել: Դա մտահղացված էր իշխանություն ունեցող գլոբալ խմբավորումների կողմից, ներառյալ ողջ աշխարհով մեկ կառավարությունների միջանցքներում գտնվող՝ իրենց չար ահագության պատճառով: Չնայած դրան, այդ տառապանքի պատճառով հիմա միլիոնավոր մարդիկ պատրաստ կլինեն լսել Իմ խոսքը և ընդունել Իմ գթասրտությունը:: Այլ կերպ նրանք պատրաստ չէին լինի: Վախենալու ոչինչ չկա, եթե սիրում եք Ինձ և ապրում Իմ Հավիտենական Հոր ցուցումներով՝ Մովսեսի միջոցով աշխարհին տրված Պատվիրաններով:

Սպասեք Իմ գալստյանը սիրով և ուրախությամբ և շնորհակալ եղեք, որ այսօր դուք կենդանի եք աշխարհում՝ ստանալու համար փրկության Իմ մեծ ընծան: Ես երբեք չեմ լքի ձեզ, զավակներս: Ահա թե ինչու եմ Ես գալիս: Որովհետև Ես ձեզ այնքան շատ եմ սիրում, դրա համար եմ Ես դա անում: Որովհետև Ես ցանկանում եմ նախապատրաստել ձեզ և ձեզ ավելի մոտեցնել Իմ սրտին, դրա համար եմ Ես աշխարհին տվել Իմ պատգամներն Իմ սիրելի ազջկա միջոցով:

Այս պատգամները կշարունակվեն Նախազգուշացումից հետո, որպեսզի ձեզ որքան հնարավոր է շատ ուղղություն տրվի Իմ ուսուցումների վերաբերյալ: Այս հատորների մեջ պարունակվող Իմ խոսքը, որը Ես կոչում եմ Ճշմարտության Գիրք, կստեղծի մի նոր քրիստոնեական բանակ, ով կպաշտպանի Իմ անունը մինչև խաղաղության նոր դարաշրջանի սկսվելը:

Ուրախ եղեք հիմա, զավակներս: Թույլ տվեք Ինձ սփոփել ձեզ, քանի որ դա կլինի առաջին անգամ, որ դուք դեմ առ դեմ կհանդիպեք Ինձ: Իմ հետևորդների համար դա կլինի մեծ սիրո, խաղաղության և երջանկության մի պահ: Բարձրացեք հիմա և ուժեղ եղեք: Քանի որ դուք արտոնյալ եք, և դրա համար դուք պետք է գովաբանություն առաջարկեք Աստծուն՝ Ամենակարող Հորը, ով թույլ է տվել որ դա տեղի ունենա:

Ձեր սիրող փրկիչ Հիսուս Քրիստոս

Խաղաղության դարաշրջանը հեռու չէ

Երեքշաբթի, 4 հոկտեմբերի, 2011թ, ցերեկվա ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, նոր դարաշրջանը իրականություն կդառնա մոտ ապագայում:

Իմ բոլոր հետևորդներրը կվայելեն խաղաղության դարաշրջանը: Դա կլինի սիրո, երջանկության և խաղաղության ժամանակահատված: Չի լինի ոչ մի հիվանդություն, ցավ, ֆինանսական անհանգստություն, որովհետև ձեզ անհրաժեշտ ամեն ինչ կապահովվի Իմ կողմից: Դուք, զավակներս, ոչ մի բանի կարիք չեք ունենա, քանի որ Ես կսնեմ ու կգրկեմ ձեզ Իմ նոր դրախտի մեջ ճիշտ այնպես, ինչպես ծնողը կկերարեր իր մանկանը: Դա պետք է ողջունել: Դա մի նպատակ է, որին դուք բոլորդ պետք է ձգտեք:

Սպասելուց օգուտ չկա, որ մտնեք խաղաղության Իմ նոր դրախտ: Քանի որ դա կարող է չափազանց ուշ լինել: Պլանավորեք այսօր, քանի որ չգիտեք, թե դա երբ տեղի կունենա: Փաստորեն, դա տեղի կունենա այնքան արագորեն և անսպասելի կերպով, որ դուք, Իմ հետևորդներ, պարզապես կգտնեք ձեզ այնտեղ մի անգամ աչք թարթելու ընթացքում: Ահա թե ինչու դուք պետք է սկսեք նախապատրաստել ձեր հոգիները հիմա, քանի որ միայն մաքուր հոգիները կարող են մտնել:

Ժամանակը էական է: Սա, զավակներս, ձեզ ուղղված ամենավերջին կոչերից մեկն է, որ փոխեք ձեր կյանքերը նախքան Նախազգուշացումը: Նախապատրաստվեք ամեն օր և վստահեք Իմ Աստվածային Խոսքին երբ հիմա ձեզ հրամայվում է հետևել Իմ պլաններին հոգիների փրկության համար:

Հիմա խաղաղության դարաշրջանը հեռու չէ, և Ես կոչ եմ անում ձեզ նախապատրաստել ձեր ընտանիքները, որպեսզի դուք կարողանաք լինել որպես մեկ Իմ Թագավորության մեջ:

Ձեր Աստվածային Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Գլոբալ խմբերը Հակաքրիստոսի տիրապետության տակ

Չորեքշաբթի, 5 հոկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ 09:00

Իմ սիրելի աղջիկ, Ես գոհ եմ նրանից, թե ինչ ձևով ես դու ավելացրել Իմ հանդեպ քո ամենօրյա Պաշտամունքի ժամերը: Սա լավ է, որովհետև այդ յուրահատուկ ժամանակի ընթացքում քեզ տրված Իմ շնորհները կուժեղացնեն քո կամքը, որ տարածես Իմ պատգամներն ավելի հեռու:

Հիմա Իմ զավակներից ավելի շատերն են հասկանում աշխարհում տիրող մթնոլորտը թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական առումով, որը փոխվել է իրենց հասկացողության սահմաններից այն կողմ, նրանք շուտով կտեսնեն ճշմարտությունը: Գլոբալ

առաջանորդները, որոնց մասին Ես խոսում եմ, ովքեր վախկոտությունից թաքնվում են որ դուք չկարողանաք տեսնել իրենց, ավելացնում են իրենց պլանները **գլոբալ տիրապետության համար:**

Նրանք կառուցում են բանակներ, զենքեր և թունավոր նյութերը՝ բոլորը մեկ նպատակի համար, որ ոչնչացնեն Իմ զավակներին: Դավադրության տեսությունները մշտապես դատապարտվում են, երբ սուր դիտորդները հրապարակում են ճշմարտությունը: Քանի որ պետք է հասկանաք, որ այդ խմբերն այնքան հզոր են՝ բոլորը համախմբված օրինավարության մեկ միավորված ճակատի մեջ, որ կարող են իշխել ճշմարտության վրա և թաքցնել այն հանրության աչքից:

Ընդունեք, զավակներս, որ չար խումբը իր մարտն է բարձրացնում Իմ հետևորդների և եկեղեցու առաջնորդների դեմ: Նրանք նույնիսկ կարողացել են ներթափանցել Իմ եկեղեցի՝ ներսից: Նրանց թույնը դուրս է ժայթքում ինչպես հոսանք՝ տարածվելով ու հոսելով բոլոր ուղղություններով: Կա պլան ոչ միայն ձեզ խաբելու, այլև ձեզ հավաքագրելու, որ մտածեք իրենց ձևով: Արտաքինից նրանք կերևան որպես աշխարհին փրկություն առաջարկողներ՝ հումանիտար օգնության դիմակի տակ: Նրանց ստեղծագործական լուծումները՝ կյանքը ձեզ համար ավելի հեշտ դարձնելու համար, կլինի ձեր փողը, ձեր սնունդն ու առողջությունը, ձեր բարեկեցությունն ու կրոնը որպես մեկ միասնականացնելու տեսքով: Բոլորը մեկ տիրապետության ներքո. Հակաքրիստոսի տիրապետության:

Խնդրում եմ մերժեք այդ չար մարդկանց փորձերը՝ ներքաշելու ձեզ, Իմ անմեղ զավակներ, իրենց չար պլանի մեջ: Նրանք ցանկանում են, որ դուք ձեր սեփական համաձայնությամբ, մերժեք Աստծուն՝ Ամենակարող Հորը: Հենց որ նրանք վերահսկեն ձեզ, դուք կորած կլինեք: Նրանք կվերահսկեն թե ինչ եք դուք ուտում, ինչ կրոնական արարողությունների եք մասնակցում և իրենց կողմից ձեզ տրվող դեղորայքը:

Աղոթեք, աղոթեք Հայր Աստծուն, որ կանգնեցնի նրանց չար վայրագությունները հիմա, և խնդրեք Նրան, որ փրկի նրանց հոգիները Նախազգուշացման ընթացքում: Անկախ նրանից, թե ինչ դիվային պլաններ ունեն նրանք, նրանք ամենաշատը ձեր աղոթքների կարիքն ունեն: Նրանք Սատանայի խամաճիկներն են, խեղճ սխալ ուղղորդված հոգիներ, և շատ դեպքերում չգիտեն, թե ինչ են անում կամ ում հրամաններն են կատարում:

Աղոթեք Իմ Աստվածային Գթասրտության աղոթքն ամեն օր այդ հոգիների համար եթե կարող եք, և որքան կարող եք: Օգնեք Ինձ, որ փրկեմ նրանց:

Հիսուս Քրիստոս

Ձեր բանկային համակարգի փլուզումը մտահղացված էր Հակաքրիստոսի կողմից

Հինգշաբթի, 6 հոկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ 10:45

Իմ սիրելի աղջիկ, սրտանց աղոթիր որովհետև Հակաքրիստոսը պատրաստ է դուրս ցատկել իր թաքստոցից և կցատկի աշխարհի վրա, որ խժռի Իմ զավակներին:

Նրա խորամանկ պլանը թաքնված կլինի **գեղեցիկ, հմայիչ և պարզ արտաքինի տակ,** բայց երբ Իմ զավակները նայեն նրա աչքերի մեջ, նրանք խավար կտեսնեն, քանի որ նա /Հակաքրիստոսը/ հոգի չունի: Նա Հայր Աստծո ձեռքով չի ստեղծվել:

Աղոթեք, զավակներս հիմա, յուրաքանչյուրդ, որ կանգնեցնեք նրան ոչնչացնելուց այն ամենն, ինչ նա վերահսկում է հիմա **Մեկ համաշխարհային կարգի միջոցով:**

Աղոթքը կարող է օգնել մեղմացնելու համար մարդկության հանդեպ նրա կողմից առաջարկվող չար պլաններից շատերը: Տխուր է, բայց շատերին նա կհիմարացնի: Նախկինում Ես երբեք այնքան կոչ չեմ արել Իմ զավակներին շատ աղոթքների համար, որովհետև առանց ձեր աղոթքների նրա կողմից ղեկավարվող սխեմաները կիրականանան, ինչպես **կանխասացվել է Հայտնության Գրքում:**

Երկրի վրա նրա ներկայությունը զգացվում է ողջ աշխարհով մեկ, սակայն նրա գործողությունները թաքնված են տեսադաշտից: Նա նման է մի ժայռի, որը եթե գցեն ջրի մեջ, կառաջացնի պղպջակներ, որոնք կարող են մղոններ հեռու գնալ: Նա ցանկանում է ոչնչացնել ձեզ, որովհետև դուք Իմ զավակներն եք:

Իմ այն զավակները, ովքեր ստրկաբար հետևում են նրա յուրաքանչյուր շարժմանը, կույր են: Այդ մարդկանց կողմից կատարվող գաղտնի ոճրագործությունները մեծ վիշտ են առաջացնում Երկնքում:

Զավակներս, Ես պետք է խնդրեմ ձեզ աղոթել սուրբ Միքայել հրեշտակապետին, որ սաստի Սատանային այս անհանգիստ ժամանակներում: Հակաքրիստոսը արագորեն շարժվում է, և նրա ազդեցությունը արագացնում է գլոբալ սյուժեն՝ ամենուր միասնականացնելու ձեր արժույթները:

Ձեր բանկային փլուզումը նպակային ձևով մտահղացված էր Հակաքրիստոսի կողմից, որպեսզի երբ ձեր երկրներն օգնության կարիք ունենան, նա և իր **չար կամակատարները բարձրանան փրկելու համար ձեր երկրները:**

Արթնացեք դուք բոլորդ և տեսեք թե ինչ է տեղի ունենում ձեր աչքերի առջև: Նա սպասում է, որ հանկարծակի ցատկի, բայց ձեր աղոթքները կարող են թուլացնել նրա գործողությունները և ետ պահել նրան իր ուղիներում: Նրա աղտոտ ձեռքերը սպասում են բռնել ձեզ այնպես, որ ձեզ համար դժվար կլինի ազատ արձակվել:

Հիշեք, զավակներս, երկրի վրա Սատանայի մնալու ժամանակը կարճ է: Հակաքրիստոսն ուղարկվել է Իմ Հորից հոգիներ գողանալու համար: Այդ հոգիները գալիս են Իմ Հորից՝ Աստծուց, ամեն բանի Արարչից: Հակաքրիստոսի խոստումը՝ հարատև տիեզերքի մասին՝ սուտ է: Հիմա շատ հոգիներ են գայթակղվում այս նոր և անմիտ ուսմունքով: Ես դիտում եմ, թե ինչպես են նրանք ընկնում այդ խավար խաբող հորի մեջ և դառն արցունքներ եմ հեղում: Քանի որ հեցն որ այդ հոգիները հետևում են

խաբեության այդ ուղուն, նրանք թունավորվում են: Նրանց վերաբերմունքն ուրիշների հանդեպ, ներառյալ իրենց ընտանիքի, փոխվում է, քանի որ նրանց սրտերը սառչում են:

Սատանայի զորությունն ուժեղ է, սակայն Հայր Աստված կմիջամտի և կպատժի այս երկրի վրա Սատանայի հետևորդներին ամենայն դաժանությամբ: Նախազգուշացումը նրանց վերջին հնարավորությունն է, որ շրջեն իրենց մեջքը Հակաքրիստոսին:

Աղոթեք, որ Իմ Լույսը ներթափանցի ամեն մի հոգու մեջ Նախազգուշացման ընթացքում, որպեսզի հատկապես կորած հոգիները կարողանան փրկվել այդ սարսափելի խավարից:

Ձեր սիրող Հիսուս Քրիստոս

Քավարանը մի այնպիսի տեղ չէ, ուր դուք բավականություն կզգաք մտնելու

Ուրբաթ, 7 հոկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ 09:45

Իմ սիրելի աղջիկ, պատճառը, որ Ես այդքան շատ պատգամներ եմ ուղարկում Իմ զավակներին, այն է, որ օգնեմ նրանց նախապատրաստել իրենց հոգիներն այնպես, որը մինչև հիմա հնարավոր չէր:

Իմ զավակներից շատերը **չեն կարդացել Սուրբ Աստվածաշունչը,** ոչ էլ տեղյակ են Իմ բոլոր ուսուցումներին:

Իմ սրբազան հետևորդներն ավելի շատ ժամանակ են անցկացնում ուշադրություն դարձնելով Իմ այն ուսուցումներին, ուր Ես խնդրում եմ ձեզ բոլորիդ, որ սիրեք ձեր ընկերոջը: Սա լավ է: Ոչ մի խոսք չի ասվում այն հետևանքների մասին, որ կանգնած են մարդկության առջև, եթե նրանք մերժեն Հորը: Ինչու՞ են Իմ սրբազան սպասավորները **ժխտում դժոխքի գոյությունը** և ինչու՞ են դանք նկարում **քավարանի վարդագույն պատկեր:**

Եկեղեցիների միջոցով Իմ զավակներին շատ լավ բաներ են սովորեցվել, որոնք հռչակում են Աստծո՝ Ամենակարող Հոր փառքը: Տխուր է, սակայն **քավարանի և դժոխքի գոյությունն այնքան է նսեմացվել**, որ Իմ զավակներն ինքնագոհ են դարձել իրենց գոյության մասին:

Իմ զավակներին սխալ ուղղությամբ են առաջնորդում նաև Չարի գոյության հարցում: **Իմ սրբազան սպասավորներից շատերը նույնիսկ մերժում են նրա գոյությունը::** Ոհ, որքան հիմար են նրան, մտածելով, թե մարդը կարող է հզորացնել իր հավատն առանց իմանալու կամ հասկանալու Չարի զորության մասին ճշմարտությունը:

Իմ սրբազան սպասավորների կողմից ուղղորդության այդ պակասը հանգեցրել է նրան, որ աշխարհում չարը ծաղկել է մի այնպիսի ձևով, որը կարող էր կանխվել աղոթքի միջոցով: Սատային թույլ է տրվել ազատ ձևով թափառել այս երկրի վրա որոշ ժամանակ Իմ սրբազան սպասավորների կուրության պատճառով: Եթե Իմ զավակներին ինչպես հարկն է տեղյակ պահեին Սատայի կողմից ստեղծվող ավերածությանը, ապա նրա աղդեցությունը թուլացնելու համար ասված աղոթքն ավելի հզոր կլիներ:

Քավարանի գոյությունը

Քավարանի գոյությունը սխալ է հասկացվում: Շատերը հավատացած են, թե այն պարզապես մաքրագործման մի սպասողական հատված է, նախքան հոգիները կկարողանան մտնել Երկինք, այն հոգիների համար, ովքեր մահվան պահին շնորհի վիճակի մեջ չեն եղել: **Քավարանում** տարբեր մակարդակներ կան, զավակներս, և բոլոր հոգիները զգում են խավարի այրող ցավ, որն ուժեղանում է մակարդակի իջնելու հետ: Սա նշանակում է, որ այն հոգիները, ովքեր հազիվ են ազատվել դժոխք ընկնելուց, ամենաշատն են տառապում այրող ցավից: Չնայած քավարանում գտնվող բոլոր հոգիներն ի վերջո կմտնեն Իմ Հոր Թագավորություն, սակայն դա այնպիսի տեղ չէ, ուր Իմ զավակներն իրենց բավարարված կզգան մտնելու համար: Ահա թե ինչու դուք պետք է պայքարեք մեղքի դեմ և թողություն խնդրեք որքան հնարավոր է կանոնավորապես, որ մնաք շնորհի վիճակի մեջ: Ահա թե ինչու դուք պետք է միշտ ենթարկվեք Տասը Պատվիրաններին: Ահա թե ինչու դուք պետք է նաև **աղոթեք այն հոգիների համար, ովքեր այնտեղ են, որովհետև առանց ձեր աղոթքների նրանք չեն կարող մտնել Երկնքի Թագավորություն մինչև Դատաստանի վերջնական Օրը:**

Ժամանակն է հիմա նայել ճշմարտությանը, զավակներս

Աղոթեք այն շնորհների համար, որոնց կարիքն ունեք, որ ազատ լինեք մեղքից, որպեսզի կարողանաք մտնել Երկինք: Պատրաստ եղեք ամեն օր, քանի որ տեղյակ չեք այն պլաններին, որոնք արդեն կան և սպասում են ձեզ: Ես տալիս եմ ձեզ այս պատգամը, որպեսզի ճշմարտությունը պարզ լինի: Տասնյակ տարիներ շարունակ այս կարևոր պատգամները պարզությամբ չեն տրվել ձեզ, զավակներս: Կարևոր է, որ դուք ինչպես հարկն է նախապատրաստված լինեք:

Ամեն օր ցերեկվա ժամը 3-ին Աաստվածային Գթասրտության աղոթքն ասելով, **Ես կմիջամտեմ մահվան պահին հանուն ձեզ, անկախ նրանից, թե ինչպիսի մեղավոր եք դուք,** և ցույց կտամ ձեզ Իմ գթասրտությունը: Ես սա ասում եմ ձեզ, որովհետև Ես սիրում եմ ձեզ, և ոչ թե ձեզ վախեցնելու համար, այլ որպեսզի տարածեք այս ճշմարտությունը ձեր ընտանիքներում:

Այսօր Իմ խոսքը պարզապես մի հիշեցում է այն ճշմարտությունների, որոնցից դուք **զրկված եք եղել հանդուրժողականության դիմակի ետևում:** Դա մի փոքր նման է այն բանին, երբ ծնողները փչացնում են զավակին իրենց մեծ սիրո պատճառով: Սա կարող է տանել դեպի երեխայի առողջության քայքայում: Իր հերթին այդ երեխան դառնում է անտեղյակ, թե ինչ առողջ սնունդ պետք է ուտել, քանի որ չգիտի դրանց մասին: Նրան երբեք չեն ասել:

Գնացեք հիմա և ասեք ձեր եղբայրենրին և քույրերին դժոխքի և քավարանի մասին, նախքան չափազանց ուշ չէ: Որովհետև եթե դուք չասեք, ուրիշ ոչ մեկը չի ասի:

Ձեր ուսուցիչ և Աստվածային Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Կույս Մարիամ – Իմ Որդու հանդեպ անտարբերության մեղքն ամենուր է

Շաբաթ, 8 հոկտեմբերի, 2011թ, ցերեկվա ժ 02:22

(Ստացված Տիրամոր մի մասնավոր երևումի ժամանակ, որը տևեց մոտ 30 րոպե)

Զավակս, այնքան շատ հոգիներ կան հավիտենական աքսորի դատապարտված, եթե նրանք չշրջվեն դեպի Իմ թանկագին Որդին:

Իմ որդին մեծապես տառապում է չարչարանքի մեջ մինչ դիտում է, թե ինչպես են այդ զավակները երերուն քայլվածքով գնում մի չար ճանապարհից դեպի մյուսը:

Իմ Որդու հանդեպ անտարբերության մեղքն ամենուր է, և այնքան շատերը, ովքեր գիտեն Նրա գոյության մասին, շարունակում են ընտրել իրենց սեփական ազատ կամքով Նրան ուրանալը:

Հիմա է ժամանակը, որ նրանք հասկանան, թե իրենց ինչ է սպասվում առջևում, եթե չապաշխարեն Գիտակցության Լուսավորման ընթացքում, որը նրանք շուտով կզգան:

Դուք, ովքեր սիրում եք Իմ Որդուն, վերցրեք Նրա խաչը և օգնեք Նրան ետ բերել այն հոգիներին, որոնց Նա ցանկանում է պահել Իր թանկագին սիրող բազուկների մեջ:

Ձեզնից այնքան շատերը, զավակներս, ովքեր իրականում չեն ճանաչում Իմ Որդուն, պետք է հասկանան Նրա սրտի նուրբ քնքշությունը: Այնքան շատ սեր ունի Նա ձեզանից յուրաքանչյուրի հանդեպ, որ եթե տեսնեիք Նրա տառապանքը մերժման պատճառով, դուք կպառկեիք հատակին, կլացեիք և ներողամտություն կխնդրեիք մարդկության մեղքերի համար:

Խնդրում եմ, Ես կոչ եմ անում ձեզ սրտանց աղոթել Նախազգուշացման ընթացքում Իմ Որդու կողմից այնքան ցանկացված դարձի համար:

Ձեր Օրհնյալ Մայր

Մարդկության Թագուհի

Սատանայի կողմից ուղարկված բազմաթիվ մարգարեների դարաշրջան

Շաբաթ, 8 հոկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ 04:20

Իմ սիրելի աղջիկ, ինչպես Իմ իսկական տեսանողներն են առաջ գնում աշխարհ, այնպես էլ կեղծ մարգարեները կգնան: Դուք կճանաչեք նրանց՝ նրանց կողմից աշխարհին տրվող պատգամները մանրամասնորեն քննելու միջոցով: Քանի որ ինչ-որ տեղ ձեր ներսում կզգաք, որ Իմ ուսուցումներն ու Ամենասուրբ Աստվածաշնչում պարունակվող ճշմարտությունը խարդախվել է: Այնքան նուրբ են այդ ոչ ճշմարտությունները, որ միայն նրանք, ովքեր ունեն Սուրբ Գրքերի ճշմարիտ իմացություն, միայն նրանք կկարողանան նկատել դրանք:

Ուշադիր եղիր ամեն մի ատելության հանդեպ, որ այդպիսի տեսանողները առաջացնում են իրենց հետևորդների միջև, երբ նրանք կռվում են, բաժանում կամ կիսում ընտանիքները: Այդ տեսանողների աշխատանքի հետևանքով հիմա սկսում են աշխարհ նետվել պաշտամունքներ, որպեսզի խառնաշփոթություն և անհանգստություն առաջացնեն հավատացյալների մեջ:

Ուր էլ որ Իմ Սուրբ Խսքը լինի, դուք կգտնեք սեր: Իմ պատգամները ստեղծում են սեր և ներդաշնակություն և ազդում են ձեր հոգու վրա: Իմ պատգամները միշտ կխոսեն ճշմարտությունը, և չնայած երբեմն ասում են բացարձակ ճշմարտությունն ու վախեցնող են, նրանք տրվում են ձեզ, զավակներս, սիրուց ելնելով:

Կեղծ մարգարեները կուղարկեն պատգամներ, որոնք հեշտ չէ կարդալ ու հասկանալ: Նրանց մակերեսին կլինի իշխանության և սիրո զգացողություն: Այնուամենայնիվ, նրանք ձեզ չեն բերի հոգու խաղաղություն: Այդպիսի տեսանողները, որոնց մեծ մասն Աստծուց չէ, սկզբում գայթակղեցնում են, հետո՝ վերահսկում մինչև վերջնականապես ձեզ կներքաշեն ստի և խաբեության մեջ:

Սատանան և նրա բանակը ազդեցություն կունենա այդպիսի տեսանողների վրա: Նա կարող է նույնիսկ կարձակվել իսկական տեսանողների վրա, երբ խրախուսում է նրանց հեռանալ Ինձնից խուճապի մեջ: Ես կոչ եմ անում ձեզ, զավակներս, որ միշտ զգոն լինեք:

Մերժեք այն պատգամները, որոնք հակասում են Իմ ուսուցումներին որևէ ձևով, քանի որ այդ դեպքում կարող եք վստահ լինել, որ դրանք կեղծ են:

Այսօր Ես աշխարհում խոսում են միայն մի քանի իսկական տեսանողների հետ: Նրանք քսանից քիչ են և ավելի քիչ, քան կարծում եք: Նրանցից յուրաքանչյուրին տրվել է տարբեր դեր, բայց Իմ ձայնն ու Իմ ուսուցումները ծանոթ մի երանգ ունեն, որը դուք կզգաք: Նրանց պատգամները նպատակ կունենան, բոլորն էլ նախատեսված են խրախուսելու համար ձեզ, որ նախապատրաստեք ձեր հոգիները:

Ցանկացած արարք, որը խրախուսվում է նրանց կողմից, ովքեր իրենց կոչում են տեսանողները, որ տարօրինակ կթվա կամ չի ներառնի հարևանի հանդեպ սերը, այդպիսի դեպքերում շրջեք ձեր մեջքը դրանց հանդեպ:

Ուշադիր եղեք, քանի որ սա Կեղծ Մարգարեի դարաշրջանն է, ով իրեն կհայտնի աշխարհին շուտով: Նույնպես, սա մի **դարաշրջան է բազմաթիվ կեղծ մարգարեների՝ ուղարկված Խաբեբայի կողմից** աշխարհ, որ առաջացնեն հոգու խավար և շփոթություն:

Ձեր սիրող Հիսուս

Հայր Աստված – Ուշ դարձրեք հիմա մարդկությանն ուղղված Իմ վերջին կոչին

Կիրակի, 9 հոկտեմբերի, 2011թ, ցերեկվա ժ. 03:30

Աղջիկս, ասա աշխարհին այն սիրո մասին, որ Ես ունեմ ամենուրեք գտնվող Իմ արարածների հանդեպ: Տեղեկացրու նաև նրանց, որ հիմա Ես կիրականացնեմ աստվածային միջամտության ամենամեծ գործողությունը, որի նմանը չի տեսնվել երկրի վրա **Իմ սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի հարությունից ի վեր:**

Ամեն ինչ նախապատրաստված է **Գթասրտության այդ մեծ Գործողության համար, որը Ես հաստատել եմ՝ օգնելու փրկել ձեզ բոլորիդ:**

Ձեր հանդեպ Իմ սերը նշանակում է, որ մինչ Ես մտադիր եմ կռվել Խաբեբայի հետ մարդկությանը ոչնչացնելու նրա փորձերի դեմ, Ես հիմա թույլ կտամ Գթասրտության մի վերջին Գործողություն՝ ձեզ դարձի բերելու համար: Իմ Աչքում ձեզ ազատագրելու այս վերջին գործողությունը նշանակում է, որ մարդը մեկ անգամ ևս կարող է իմանալ Իմ գոյության մասին:

Զավակներս, խնդրում եմ խոնարհվեք հիմա և գթասրտություն խնդրեք ձեր ընտանիքի և սիրելիների համար: Եթե նրանք շնորհի վիճակի մեջ չեն, ապա Նախազգուշացումը դժվար կլինի նրանց համար: Դուք պետք է նրանց տեղյակ պահեք ճշմարտության մասին խորհելու անհրաժեշտության մասին:

Ժամանակը կարճ է: Նախազգուշացումը ձեզ վրա է: Երբ այն ավարտվի, ,դուք ժամանակ կունենաք որոշելու, թե որ ուղին եք ընտրում: Աստվածային լույսի ուղին, կամ Խաբեբայի ուղին: Նրանք կթաքնվեն, երբ Իմ ձեռքն իջնի պատժելու համար, սակայն գնալու տեղ չեն ունենա:

Իմ համբերությունը սպառվում է, մինչ Ես հիմա պլանավորում եմ միավորել բոլոր նրանց, ովքեր հավատում են Ինձ՝ ամեն բանի Արարչին, և տանել նրանց Ինձ հետ դեպի Խաղաղության նոր Դարաշրջանը: Նրանք, ովքեր կընտրեն քայլել մյուս ճանապարհով, կնետվեն դժոխքի կրակների մեջ:

Ուշ դարձրեք հիմա մարդկությանը տրվող այս վերջին կոչին, սա ձեր ժամանակն է, որ որոշեք ձեր ապագան: Աղոթեք նրանց համար, ովքեր կույր են Իմ սիրո հանդեպ, քանի որ նրանցից շատերը, երբ ճշմարտությունը բացահայտվի իրենց, մեկ անգամ ևս կարհամարհեն Ինձ և կշրջեն իրենց մեջքը:

Ձեր սիրող Արարիչ

Հայր Աստված

Ամենաբարձրյալ Թագավոր

Պատգամ Ամերիկային. Գրկեք բոլոր հարանվանությունների ձեր եղբայրներին ու քույրերին

Երեքշաբթի, 11 հոկտեմբերի, 2011թ, ցերեկվա ժ. 03:30

Իմ սիրելի աղջիկ, Ես ցանկանում եմ հաղորդակցվել ամերիկայի ժողովրդի հետ: Իմ պատգամը նրանց՝ հետևյալն է. դուք, Իմ թանկագին զավակներ, մեծապես տառապում եք այս ժամանակներում: Դուք անցնում եք մի մաքրագործում, որն անհրաժեշտ է ձեր հոգիները մաքրելու համար:

Ամերիկայում մեծ մեղքերը, որոնք Ինձ տանջում են մեծապես, աբորտն ու մարմնի մեղքերն են: Իմ զավակներից շատերն են վարակված խաբեբայի կողմից, ով թաքնված ձևով ղեկավարում է փակ դռների ետևում ձեր դրամական և քաղաքական համակարգերը: Ձեզնից այնքան շատերն են մոռացկոտ այս փաստի հանդեպ: Ես հիմա կոչ եմ անում ձեզ աղոթել՝ մեղմելու համար ձեր երկրի ոչնչացման նրանց ստանայական պլանը:

Աղոթքը, զավակներս, կօգնի մեղմացնել **այն Երկնային պատիժը, որն Իմ Հայրը կսանձազերծի երկրի վրա աբորտի մեղքի համար:** Աղոթեք, աղոթեք և միավորվեք՝ պատիվ մատուցելու Իմ Հորը: Քանի որ միավորելով բոլոր կրոնականներին, որոնք պատվում են Հորը՝ Աստծուն՝ աշխարհի արարչին, դուք կարող եք օգնել ձեր երկրին:

Դուք պետք է աղոթեք ներում ստանալու համար և վստահեք, որ ձեր աղոթքներին պատասխան կտրվի Իմ Հոր սահմանած աստվածային ժամկետում:

Գրկեք ձեր եղբայրենրին ու քույրերին բոլոր կրոնական հարանվանություններից, ովքեր հավատում են Հայր Աստծուն, և աղոթեք որպես մեկ, որ ազատեք ձեր երկիրը մեղքերից: Զավակներս, ձեր երկիրն այնքան ընդարձակ է, որ կարևոր է, որ Ես կարողանամ որքան հնարավոր է շատ հոգիներ փրկել: Ես սա կարող եմ անել միայն ապաշխարության միջոցով, որը տեղի կունենա Նախազգուշացման ընթացքում, և ձեր աղոթքների ու պաշտամունքի միջոցով:

Դարձեք դեպի Ինձ հիմա դուք բոլորդ: Մի տարբերեք ձեզ միմյանցից՝ կրոնների պատճառով, պարզապես վստահեք Հայր Աստծուն, և Նա կպատասխանի ձեր աղոթքներին:

Դուք, Իմ թանկագին զավակներ, կորած եք: Դուք այնքան շատ խառնաշփոթություն եք տեսել և ձեզ ներկայացվել են այնքան շատ շրջված ճշմարտություններ Հայր Աստծո գոյության մասին: Դուք օգտագործում եք կրոնը որպես ֆասադ՝ որ թույն տարածեք ձեզնից ավելի դժբախտների վրա: Ժամանակն է ընդունել ճշմարտությունը, որ միայն հարևանի հանդեպ սիրո միջոցով է, որ դուք կարող եք որպես ազգ վերադառնալ ձեր Արարիչ Հայր Աստծո բազուկների մեջ:

Ես սիրում եմ ձեզ Իմ ողջ էությամբ մի հուզմունքով լի կարեկցանքով: Ես ջանք եմ գործադրում փրկել ձեզ, որ դուք կարողանաք առաջնորդվել դեպի մի նոր և հրաշալի դարաշրջան, որը ձեզ սպասում է այս երկրի վրա: Այս նոր դրախտ մտնելու համար ձեր հոգիները պետք է ազատ լինեն մեղքից:

Աղոթեք շնորհների համար, որ թողություն փնտրեք ձեր սեփական մեղքերի համար և ձեր կառավարությունների կողմից կատարվող մեղքերի համար:

Ես թողնում եմ ձեզ սիրո և խաղաղության մեջ:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

Կույս Մարիամ. Դու կենթարկվես հսկայական զննության և հարձակման

Չորեքշաբթի, 12 հոկտեմբերի, 2011թ, գիշերվա12:00

Զավակս, սա մի ժամանակ է, որ երբ դու աշխատում ես Իմ Որդու համար, դու կենթարկվես հսկայական զննության և հարձակման: Դու պետք է միշտ պատվես Իմ Որդու ցանկությունները և ենթարկվես Նրան միշտ: Երբեք մի պաշտպանիր Նրա Ամենասուրբ Խոսքը, քանի որ Նա չի ցանկանում որ դու այդ անես: Մի պատասխանիր և մի ներգարավվիր նրանց մեջ, ովքեր մարտահրավեր են նետում Նրա խոսքին, որը կարող է առաջ բերել քննարկում և կասկածներ:

Հիմա դու կլինես Խաբեբայի գրոհի ներքո, բայց դու պետք է աղոթես Իմ պաշտպանության համար և երբեք տեղի չտաս այդպիսի խայթոցներին: Նա՝ Խաբեբան, աշխատում է ուրիշների միջոցով՝ քեզ վիրավորելու համար, եթե դու նրան թույլ տաս դա անել, ապա դու կռվի մեջ ես մտնում նրա հետ և տալիս ես նրան այն ուժը, որը նա է ցանկանում:

Հաստատուն կանգնիր այդ պահերին, զավակս, և միշտ շրջվիր դեպի Ինձ: Ես կծածկեմ քեզ Իմ ամենասուրբ թիկնոցով, որ պաշտպանեմ քեզ նրանից, և ամեն ինչ լավ կլինի:

Մնա խիզախ և ընդունիր սա որպես մի ընծա Ամենաբարձրյալ Աստծուց, քանի որ առանց այդպիսի զորության դու չես կարողանա արդյունավետորեն կատարել այս աշխատանքը: Միշտ հիշիր, որ դու միայնակ չես այս աշխատանքում, որովհետև բոլոր սրբերը բարեխոսում են քեզ համար և քեզ տրվում է ամեն տեսակ աստվածային պաշտպանություն:

Շարունակիր հնազանդության մեջ մնալ Իմ Որդու հանդեպ և փորձիր ու ուրախ եղիր երբ ընդունում ես այն տառապանքը, որը Նա թույլ է տալիս հոգիների փրկության համար: Դու պետք է շարունակես աղոթել Սուրբ Վարդարանն ամեն օր և աղոթել Ինձ հետ, որպեսզի հոգիներ փրկվեն:

Ես օրհնում եմ քեզ, զավակս: Երկինքն ուրախանում է հանուն Իմ Թանկագին Սիրելի Որդու կատարվող այս արժեքավոր աշխատանքով, ով սիրում է ողջ մարդկությանը, սակայն վշտով լաց է լինում այն հոգիների համար, ովքեր կմերժեն Իր գթասրտության ձեռքը Նախազգուշացումից հետո:

Ձեր սիրող Մայր

Երբեք մի պաշտպանիր Ինձ, քանի որ դա անհրաժեշտ չէ

Հինգշաբթի, 13 հոկտեմբերի, 2011թ, գիշերվա ժ 12:00

Իմ սիրելի աղջիկ, Ես պետք է քեզ տեղեկացնեմ **Իմ Ամենասուրբ Խոսքը պաշտպանելուց ետ կանգնելու** անհրաժեշտության մասին:

Նրանք, ովքեր քննության են ենթարկում Իմ խոսքը, պետք է աղոթեն Ինձ առաջնորդության համար: Ես հիմա քեզ հրահանգում եմ, որ **երբեք չփորձես բացատրել Իմ աստվաային շուրթերից եկող պատգամները:**

Ես այս բանը քեզ շատ անգամ եմ ասել, և քեզ իրավասություն տրված չէ այդպես վարվել: Դրա փոխարեն ընդունիր Իմ պատգամներն այնպես, ինչպես կան: Մի կասկածիր դրանց: Մի փորձիր վերլուծել դրանք, քանի որ մարդը շատ քիչ գիտե աստվածային պլանների կամ ժամկետների մասին: Ոչ էլ մարդը որևէ բան գիտի Հաքաքրիստոսի մասին, չնայած կարծում է, թե գիտի: Այսպիսի կարևորության հարցերը միայն Իմ Սիրելի Հորն են հայտնի լինում:

Ես խնդրում եմ, որ դու երբեք չպաշտպանես Ինձ, քանի որ դրա անհրաժեշտությունը չկա: Իմ Հոր կամքը՝ հաղորդակցվել աշխարհի հետ քո և մյուս տեսանողների միջոցով, միայն դա նշանակություն ունի: Ինչպես Ես նախկինում ասել եմ, **դու գրողն ես: Ես հեղինակն եմ: Դու գործիքն ես: Ես Վարպետն եմ:**

Հնազանդությունը Իմ հանդեպ միշտ, սա է ակնկալվում քեզնից: Անել այնպես, ինչպես Ես եմ ասում, պարզ է: Քո աշխատանքն ավելի հեշտ կլինի, եթե չներքաշվես

ինտելեկտուալ կրոնական բանավեճի մեջ Սուրբ Գրքերին առնչվող հարցերի վերաբերյալ, որոնց մասին ոչինչ չգիտես:

Հիշիր խոնարհության կարևորությունը, աղջիկս: Մնա ինչպես երեխա, միշտ փոքր Իմ աչքում, և դու խաղաղություն կգտնես: Փորձություններ կուղարկվեն քեզ այս աշխատանքի ընթացքում: Սպասիր դրանց: Մի մերժիր դրանք: Քո ընծան՝ տրված Ինձ, քո ազատ կամքը, ընդունվել է, բայց դու պետք է իմանաս տառապանքը մերժել չփորձելու կարևորությունը, քանի որ դա կարևոր է հոգիների փրկության համար:

Ես սիրում եմ քեզ, աղջիկս, սակայն զգում եմ Իմ պարզ հրահանգները քեզ հիշեցնելու անհրաժեշտությունը: Ես կարիք չունեմ պաշտպանության: **Քեզ տրված խոսքերը թունավորված չեն** և չեն հակասում ժամանակի սկզբից ի վեր մարդկությանը տրված ճշմարտությանը: Աստվածաշնչում տրված ճշմարտության շատ տարբերակներ են շրջվել, որ հարմարեցվեն մարդու սեփական օրակարգին: Ես ճշմարտությունն եմ: Ես կյանքի հացն եմ: Առանց Ինձ կյանք չկա:

Առաջ շարժվիր ավելի հստակ ներքին ըմբռնումով, թե ինչ է ակնկալվում քեզնից: Դու միշտ պաշտպանված ես: Շնորհակալ եմ, աղջիկս, այն զորության համար, որ հիմա ցուցաբերում ես, սակայն թույլ տուր Ինձ միշտ առաջնորդել քեզ: Այդ կերպ այս ուղևորությունն ավելի հեշտ կլինի:

Ձեր սիրող Հիսուս

Ես չեմ կարող ստիպել մարդկանց դարձի գալ կամ ետ շրջվել

Շաբաթ, 15 հոկտեմբերի, 2011թ,երեկոյան ժ 07:00

Իմ սիրելի աղջիկ, մինչ ավելի շատ մարդիկ են լսում Իմ խոսքը, Իմ սերը կներթափանցի նրանց հոգիների մեջ և կարթնացնի նրանց թմիրից, որպեսզի միավորի նրանց Ինձ հետ, այնպես, որ Ես կարողանամ փրկել հոգիներ ամենուրեք: Ուժը թվի մեջ կօգնի Ինձ հասնելու հոգիների փրկությանը այդպիսի մեծ մասշտաբով: Իմ Հոր կողմից որպես ընծա մարդուն տրված ազատ կամքի պատճառով Ես չեմ կարող մարդկանց ստիպել դարձի գալ կամ շրջվել դեպի Հայր Աստծո հանդեպ հավատը: Դա պետք է լինի նրանց սեփական որոշումը: Աղոթքը կտարածի դարձ: Դա Ես խստանում եմ ձեզ: Մտածեք այն ընծայի մասին, որ սպասում է հոգիներին, երբ դուք, զավակներս, աղոթում եք նրանց համար:

Դուք չգիտեք աղոթքի ուժը: Բազմությունների կողմից ասված աղոթքը՝ փառաբելով Իմ Հորը և ձեր մեղքերի համար ներողամտություն խնդրելը կարող են փրկել աշխարհը: Այսպիսին է աղոթքի տիրապետության ուժը: Երբեք նախկինում Ես ձեզ այնքան կոչ չեմ արել աղոթքի համար, որոնք պետք է գան ձեր սեփական շուրթերից և ամենուր գտնվող կարծրացած սրտով մեղավորների հանդեպ սրտի առատաձեռնությամբ: Ես ձեր ազոթքների կարիքն ունեմ: Առանց ձեր աղոթքների այդ

խեղճ հոգիները չեն փրկվի, որովհետև նրանցից շատերն այնպիսի խավարի մեջ են, որ Նախազգուշացման ազդեցությունը քիչ նշանակություն կունենա: Դուք, Իմ սիրելի փայփայված զավակներ, դուք բոլորդ մեղավորներ եք, ձեզնից շատերն անում են իրենց կարողացածի չափով, որ Ինձ ցույց տան իրենց սերը, մի՞թե չեք հասկանում, որ Ես այնքան շատ եմ վստահում ձեզ, որ Ինձ կընկերակցեք: Միացեք Ինձ Իմ Սուրբ Սրտի գրկում և խնդրեք Ինձնից շնորհները, որ փրկեք ձեր եղբայրներին ու քույրերին: Ես միլիոնավոր հոգիներ կփրկեմ երբ դուք ձեր ժամանակը տրամադրեք աղոթելու Աստվածային Գթասրտության աղոթքը:

Սա այն ժամանակն է, երբ Աստվածային Գթասրտության աղոթքն ասելը ամենաարդյունավետը կլինի: Եղեք սրտով, մտքով, մարմնով և հոգով առատաձեռն: Մի կողմ նետեք ցանկացած կասկած: Թույլ տվեք Ինձ՝ ձեր Հիսուսին ձեզ վեր բարձրացնել, որ բերեմ ձեզ և բոլոր նրանց, ում համար աղոթում եք, Իմ հավիտենական կյանքի մեջ:

Ձեր սիրող փրկիչ

Հիսուս Քրիստոս

Երկրի վրա ձեր ժամանակը վճռական կետում է

Կիրակի, 16 հոկտեմբերի, 2011թ, ցերեկվա ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, ինչու՞ երբ Իմ խոսքը մեկնաբանվում է, Իմ զավակներից այնքան շատերն են այն համարում վիրավորական: Մինչ Իմ զավակները պետք է սովորեն զանազանել պատգամները, որոնք հրապարակվում են նրանց կողմից, ովքեր հայտարարում են, թե գալիս են Իմ անունով, նրանք պետք է նաև սովորելնիրենց սրտերն ու միտքը բաց պահել միշտ:

Ոհ, որքան եմ Ես ցանկանում, որ հատկապես Իմ հետևորդները բացեն իրենց աչքերը և ողջունեն Ինձ իրենց սրտերի մեջ: Այդ Ես եմ՝ Հիսուսը, ով կանչում է ձեզ լսելու Իմ ձայնը, մինչ կոչ եմ անում ձեզ գալ Ինձ մոտ աղոթքի մեջ:

Երկրի վրա ձեր ժամանակը վճռական կետում է: Շատ ժամանակ չկա նախքան Ես կազդարարեմ մուտքը **խաղաղության նոր դարաշրջան,** և այդ պատճառով Ես կարիք ունեմ, որ դուք հիմա նախապատրաստեք ձեր հոգիները:

Թույլ մի տվեք, որ ամբարտավանությունը կուրացնի ձեզ ճշմարտության հանդեպ: Մի՞թե չգիտեք, որ Ես երբեք չեմ խաբի ձեզ: Լսեք Իմ ցուցումները, որ փակեք Չարի ճանապարհը՝ ձեր դատողությունը մշուշելուց: Թույլ մի տվեք նրան, որ ձեզ հեռու պահի, քանի որ եթե դուք միայն լսեք Իմ ամենասուրբ խոսքը, կիմանաք, որ այդ Ես եմ՝ Հիսուս Քրիստոսը, ով կանչում է ձեզ:

Զավակներս, եթե միայն իմանայիք, թե որքան շատ թույն է մտցվել Իմ թանկագին զավակների մեջ աշխարհով մեկ, շոկից կցնցվեիք: Այս խավարը նույնիսկ ժամանակ առ ժամանակ ծածկում է Իմ թանկագին հետևորդներին: Այն վիրավորանքը, որը Ես զգում եմ, հատկապես այն հոգիների մեջ, ովքեր կանոնավորապես աղոթում են և ցույց են տալիս ճշմարիտ պաշտամունք, երբ Ես ականատես եմ լինում ձեր կասկածներին, մեծ վիշտ է բերում:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք Սուրբ Հոգու կողմից առաջնորդության համար: Եթե բացեք ձեր կարծրացած սրտերը և խնդրեք զանազանության ընծան, Ես կպատասխանեմ ձեր կանչին:

Որքան տխուր կլինեք դուք, երբ Նախազգուշացման ընթացքում ճշմարտությունը բացահայտվի ձեզ: Ես հիմա խնդրում եմ ձեր աղոթքները, մյուս հոգիներին փրկելու համար: Վստահորեն, եթե կասկածում եք այս պատգամների միջոցով տրված Իմ խոսքին, դեռևս կարող եք ձեր սրտի մեջ աղոթել կորած հոգիների համար:

Ես սիրում եմ ձեզ և սպասում արձագանքի՝ աղոթելու Իմ խնդրանքների համար:

Ձեր Հիսուս

Իմ վերադարձը՝ ձեզ փրկելու համար, կզգացվի աշխարհի յուրաքանչյուր անկյունում

Երկուշաբթի, 17 հոկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ. 09:30

Իմ սիրելի աղջիկ, ժամանակները փոխվում են ձեր շուրջը: Աշխարհը ալեկոծության մեջ է՝ պատճառված խավարի ոգու կողմից: Դուք շրջապատված եք ամեն ապացույցով այն բանի, թե ինչ կարող է բերել մեղքի չարիքը մարդկության վրա: Այս խավարի ոգու մեջ կփայլի Իմ աստվածային ներկայության ոգին, **մինչ Ես գալիսեմ մեկ անգամ ևս մարկությանը փրկելու:**

Դուք, Իմ թանկագին զավակներ, ովքեր գիտեն ճշմարտությունը, պետք է ասեք ուրիշներին, թե իրենք որքան բախտավոր են, որ իրենց տրվում է այս հրաշալի աստվածային ընծան: **Իմ սերը կհարվածի երկիրը մի այնպիսի ձևով, որ դուք ցած կիջնեք խոնարհությամբ և ծալված ծնկներով վշտից կողբաք** այն դժգոհության համար, որ առաջացրել եք՝ վիրավորելու Իմ Հավիտենական Հորը:

Ամենաբարձրյալ Աստծո միջոցով է, որ գթասրտության այս մեծ գործողությունը հիմա ներկայացվում է ձեզ: Ուրախացեք, քանի որ հիմա **լույս կա աշխարհում, որն առաջ կբերի հոգիներին** և դեպի Հայր Աստծո բազուկների մեջ:

Ես գալիս եմ նորից, որ տամ ձեզ այն կյանքը, որի կարիքն ունեք, որ կարողանաք մեկ անգամ ևս բարձրացնել ձեր աչքերը պաշտամաունքով և գովաբանեք Հայր Աստծո

փառքը և շնորհակալություն հայտնեք Նրան այն արդարության համար, որը Նա հիմա ցույց է տալիս Իր կորած բայց թանկագին զավակների հանդեպ:

Ես՝ Հիսուս Քրիստոսը, հիմա նախապատրաստում եմ, որ թույլ տամ ձեզ ականատես լինել գթասրտության ճշմարտությունը յուրաքանչյուր հոգու համար, ներառյալ կարծրացած մեղավորներն ու չհավատացողներն ամենուրեք:
Իմ և Հայր Աստծո գոյության ապացույցը կբացահայտվի իր ողջ երկնային փառքով յուրաքանչյուր մարդու, կնոջ և երեխայի:

Իմ ներկայությունը կբացահայտվի այնպիսի ձևով, որ ոչ մեկը չի ժխտի և չի կարողանա ժխտել: Քանի որ երկինքը կբացվի, աստղերը կբախվեն, որպեսզի ձեզ փրկելու համար Իմ վերադարձը զացվի աշխարհի յուրաքանչյուր անկյունում նույն ժամին:

Ոհ, որքան կուրախանան Իմ զավակները, երբ ականատես լինեն Իմ աստվածային ներկայությանը: Նույնիսկ խավարի մեջ գտվողները կզգա, թե ինչպես է Իմ սերը դիպչում իրենց սառը հոգիներին, որը նորից կբոցավառի դրանք:

Նախապատրաստվեք: Սպասեք Իմ փառահեղ վերադարձին: Աղոթեք նրանց համար, ովքեր վախ ունեն իրենց սրտերի մեջ: Մի վախեցեք Ինձնից: Սպասեք այս մեծ իրադարձությանը սիրով և խոնարհությամբ ձեր սրտերի մեջ:

Ես սիրում եմ ձեզ, զավակներս: Իմ գթասրտության այդ մեծ գործողությունը կապացուցի դա ձեզ:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Մարդկության Թագավոր

Հայր Աստված – նախապատրաստիր աշխարհը Իմ սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի գալստյան համար

Չորեքշաբթի, 19 հոկտեմբերի, 2011թ, ցերեկվա ժ 02:00

Աղջիկս, նախապատրաստիր աշխարհը Իմ սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի ժամանման համար, քանի որ Նա հիմա գալիս է, ինչպես կանխասացվել է, որ մեկ անգամ ևս փրկի մարդկությանը:

Նրա ժամանումը կազդարարվի փողերի միջոցով Երկնքում և հրեշտակների բազմություններով, որոնք գովաբանություն կերգեն՝ հայտարարելու համա այդ մեծ իրադարձությունը:

Իմ մեծ ընծան մարդկությանը ներկայացվում է ձեզ Իմ սիրելի **Որդու ձևով, ով ուղարկվում է փրկելու համար ձեզ նախքան Վերջին Դատաստանը:**

Նախապատրաստեք ձեր հոգիները, քանի որ երբ ձեր մեղքերը բացահայտվեն ձեզ, Ես ձեզ հրամայում եմ խոնարհությամբ ծնկի գալ Իմ Որդու ոտքերի առջև և թողություն խնդրել: Դուք պետք է խնդրեք Նրան, որ ների ձեզ և պետք է ընդունեք պահանջվող պատիժը՝ ձեր հոգիները մաքրելու համար:

Նրա գթասրտությունն այնքան մեծ է, որ անկախ նրանից, թե որքան ծանր է մեղքը, այն կարող է ներվել, եթե իսկապես խղճի խայթ ցույց տրվի: Բոլորիցդ խոնարհություն է պահանջվում, որպեսզի արժանի լինեք մտնել երկրի վրա խաղաղության նոր փառահեղ դարաշրջանը, որի ժամանակը շատ մոտ է: Միայն այն հոգիները, ովքեր ճշմարտապես ապաշխարեն և ճշմարիտ հավատարմություն ցույց տան Իմ սիրելի Որդուն, միայն նրանք հարմար կլինեն ներս մտնել դարպասներից: Քանի որ դուք պետք է մեղքից ազատ լինեք, որ մտնեք Երկրի վրա այդ Նոր Դրախտը:

Իմ սիրելի զավակներ, Ես մեծ սիրով եմ նախապատրաստել այս Դրախտը ձեզնից յուրաքանչյուրի համար: Սա այն ժառանգությունն է, որին սպասում եք: Սա այն ձևն է, որով երկրի ընծան սկզբնապես ներկայացվել է Ադամին և Եվային:

Ով էլ որ մերժում է Երկրի վրա այս Դրախտը, ուր ոչ մի չար ոչ մի ձևով գյություն չի ունենա, իր մեջքն է շրջում դեպի փրկությունը:

Սա վերջին հնարավորությունն է ազատել ձեր հոգիները Սատանայից և այն չար ազդեցությունից, որ նա ունի ձեր կյանքի վրա:

Գրկեք մեծ գթասրտության այս հիասքանչ ընծան: Այս ընծայի միջոցով ձեզ ճշմարիտ փրկության և մի փառահեղ Դրախտի հնարավորություն է առաջարկվում, որը դուք նույնիսկ երևակայել չեք կարող:

Այն խեղճ մեղավորները, ովքեր մերժում են Իմ Որդու ներելու առաջարկը, ձեզ ավելի շատ ժամանակ կտրամադրվի, որ ետ դառնաք դեպի ձեր հավատը: Այնուամենայնիվ, ձեզ շատ ժամանակ չի տրվի, քանի որ Իմ հաբերությունը սպառվում է:

Սպասեք հիմա Իմ Որդու վերադարձին, որ ձեզ մեկ անգամ ևս փրկի մեղքից և բերի դեպի հավիտենական փրկություն:

Հայր Աստված

Իմ որդի Մուամմար Գադդաֆիի մահը

Հինգշաբթի, 20 հոկտեմբերի, 2011թ, ցերեկվա ժ. 03:15

Իմ սիրելի աղջիկ, ինչպիսի մնացորդային կասկածներ էլ որ ունեիր Իմ ամենասուրբ խոսքի հանդեպ երբեմն, հիմա արդեն վերացել են:

Ես հայտնում եմ մարգարեություններ, որպեսզի ապացուցեմ աշխարհին, որ այդ Ես եմ՝ Հիսուս Քրիստոսը, ողջ մարդկության Փրկիչը, ով հաղորդակցվում է իր զավակների հետ ամենուր այս ժամանակ:

Իմ նպատակը սենսացիա առաջացնելը չէ, այլ վստահանալ, որ ոչ մեկը դուրս չի մնում աշխարհին ուղղված Իմ ամենահրատապ կանչը լսելուց:

Իմ որդի Մուամմար Գադդաֆիի մահը, ում հոգու համար դու և քո մերձավորները աղոթում էիք այս վերջին ամիսների ընթացքում, մարգարեություններից առաջինն է, որն աշխարհին կապացուցի այս պատգամների վավերականությունը:Սա Իմ նշանն է քեզ, աղջիկս, ազատելու քո միտքը կասկածներից որոնք վարանում էին քո մտքում: (***Մյուս երկու առաջնորդների մասին մանրամասները, որոնք սպանվելու էին, նորից տրվեցին տեսանողուհուն, ինչպես նաև այդ վայրագությունների կատարման ժամանակը: Առաջին պատգամը տրվել էր 2011թ փետրվարին***):

Դու, աղջիկս, դրա մեծ մասը հոգնեցնում է քեզ, ընտրվել ես նախապատրաստելու համար մարդկությանը խաղաղության Իմ նոր դարաշրջանի համար: Սա այն ժամանակն է, որը որոշ ժամանակ կտևի Նախազգուշացումից հետո:

Գնա և նախապատրաստվիր քո Սուրբ Առաքելության հաջորդ մասի համար՝ օգնելու փրկել հոգիներ Նախազգուշացումից հետո: Քեզ տրվում են շնորհները, որոնք քեզ ուժեղ կպահեն: Իմ զավակներն ամենուրեք վերջապես լսում են ապաշխարության Իմ կանչը:

Նրանք, ովքեր ամենաշատն են Ինձ վիրավորում

Երբեք չվախենաս այս աշխատանքից, քանի որ վախենալու ոչինչ չկա: Երբեք չսասանվես և թույլ չտաս, որ հարձակումներն ու բանավոր խայթոցները դանդաղեցնեն Ինձ համար արվող քո աշխատանքը: Ես, աղջիկս, միշտ քո կողքին եմ: Հիշիր սա: Եթե և երբ հարձակման ենթարկվես Իմ Սուրբ Խոսքի համար, լուռ մնա: Իմ Սուրբ Խոսքի վրա միշտ կհարձակվեն: Ամենաշատը Ինձ վիրավորում են այն սուրբ հոգիները, ովքեր վախից և զգուշավորությունից ելնելով առաջինն են վիրավորում Ինձ այս պատգամների միջոցով: Սատանան գիտի, որ Ինձ ամենաշատը վիրավորում են Իմ ընտրյալ և նվիրված հետևորդները, ովքեր իրենց մեջքն են շրջում դեպի Ինձ:

Հիմա դու, աղջիկս, սկսում ես զգալ Իմ տառապանքի ֆիզիկական ցավը, բայց դու հիմա նախապատրաստված ես ընդունել դա Ինձ հետ միության մեջ: Այս տանջանքները երկար չեն տևի, սակայն այդ ընթացքում դու ճշտորեն կզգաս այն տառապանքը, որը Ես զգում եմ, երբ ականատես եմ լինում մեղքի: Սա, ինչպես Ես նախկինում ասել եմ քեզ, մի ընծա է, և շատ քիչ ընտրյալ հոգիներ են ստանում այն: Երբեմն վախեցնող է, սակայն դու պետք է հասկանաս, որ քո տառապանքը ոչ միայն քեզ ավելի է մոտեցնում Իմ Սուրբ Սրտին, այլև այլ միլիոնավոր հոգիներ կփրկի Նախազգուշացման ընթացքում:

Այդ տառապանքը ավելի կուժեղանա մինչ Նախազգուշացումը կմոտենա: Դիմացիր դրան լռությամբ: Քանի որ այդ կերպ դու կօգնես Ինձ փրկելու թանկագին հոգիների, ովքեր այլապես կխլվեին Խաբեբայի կողմից:

Ասա Իմ զավակներին, որ Ես ուրախանում եմ իրենց կողմից ցույց տրվող ուժեղ հավատի համար: Ասա նրանց, որ իրենք ավելի են մոտենում Իմ Սուրբ Սրտին: Ասա նրանց, որ Ես հիմա օրհնում եմ իրենց և հեղում մեծ օրհնություն՝ տալու համար նրանց այն ուժը, որի կարիքը կունենան այս սուրբ պատգամների միջոցով տրվող առաջնորդությանը հետևելու ընթացքում: Նրանք ուժի կարիք կունենան, քանի որ հեշտ չի լինի Իմ զավակների համար մարսել այն հսկայական փոփոխությունները, որոնք կսկեն ծավալվել աշխարհում:

Աղոթեք և միավորվեք որպես մեկ: Միասին նայեք երկնքին, ինչպես փոքրիկ երեխաներ՝ Հայր Աստծո հանդեպ պարզ վստահությամբ: Խնդրեք Նրան, Իմ Սուրբ Անվամբ, որ միավորի ձեզ Իր փառահեղ բանակի մեջ դեպի հավիտենական փրկության հաղթանակը:

Ես օրհնում եմ ձեզ, զավակներս, Իմ ողջ աստվածային սիրով:

Ձեր Հիսուս

Նախազգուշացումը գլոբալ խոստովանության մի ձև է

Ուրբաթ, 21 հոկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ. 08:30

Իմ սիրելի ազջիկ, գրիր սա. Հիմա դու ուժգին տառառպում ես՝ փրկելու համար խավարի այն հոգիներին, ովքեր մերժում են Ինձ և Իմ Հորը:

Այնքան փակված և կարծրացած են այդ հոգիները, որ միան ուրիշների աղոթքների և զոհաբերվող հոգիների տառապանքի միջոցով կարող են նրանք փրկվել: Քանի որ նրանք կմերժեն ազատագրում փնտրել:

Նրանց համառությունը կկանգնեցնի նրանց, որ բավարար չափով խղճի խայթ զգան՝ խոստովանելու համար իրենց մեղքերը և ներողամտություն հայցելու:

Նախազգուշացումը գլոբալ խոստովանության մի ձև է: Դա կլինի մի ժամանակ, երբ յուրաքանչյուրից կակնկալվի, որ ներողամտություն խնդրեն կամ էլ մերժեն: **Խավարում գտնվող այնքան շատ հոգիներ կմերժեն Գթասրտության Իմ ձեռքը:** Նրանք կշրջվեն Ինձնից: Դու, աղջիկս, Իմ բոլոր նվիրյալ հետևորդների հետ միասին, կարող ես օգնել փրկելու համար նրանց հոգիները հավիտենական դատապարտումից:

Ես երբեք չեմ ստիպի Իմ զավակներին տառապել Իմ անվամբ: Բայց նրանք, ովքեր առաջարկում են Ինձ, որպես ընծա, իրենց օգնությունը **տառապանքի միջոցով՝ Ես կարող եմ փրկել մարդկության մեծ մասին:**

Տառապանքը գալիս է Սատանայի հարձակումներից, երբ նա տանջում է այն հոգիներին, որոնք մոտ են Ինձ և նրանց, ովքեր նշանակված են Իմ կողմից իրականացնելու սուրբ առաքելություն՝ հոգիներ դարձի բերելու համար: Իմացեք, որ երբ այդ հարձակումները գալիս են, դուք Ինձ հետ միության մեջ եք: Այդ ժամանակ դուք նաև կճանաչեք Ինձ: Դուք կիմանաք, թե ինչպես եմ Ես զգում. Իմ ուրախությունը, Իմ տխրությունը, Իմ վիշտը, Իմ ցավը և այն սարսափը, երբ Ես կորցնում եմ մի հոգու Սատանային:

Մի անհանգստացիր: **Արդեն միլիոնավոր հոգիներ են փրկվել այս պատգամների միջոցով:**

Իմ նվիրյալ բանակի աղոթքներն արդեն **մեղմացնում են գլոբալ աղետները և Իմ Սուրբ Երեցի հեռացումը Վատիկանից:** Նրանց հնազանդությունը՝ **Իմ Աստվածային Գթասրտության աղոթքն ասելու,** հոգիներ է փրկում հենց հիմա:

Աղջիկս, վստահացիր, որ Իմ բոլոր զավակները հասկանան, եր **Ես խոսում եմ բոլոր կրոնների և հարանվանությունների հետ այս պատգամների միջոցով: Ես ոչ մեկին չեմ բացառում:** Քանի որ նրանք բոլորն էլ Աստծո զավակներն են: Միայն մեկ Աստված կա, որն Իմ Հավիտենական Հայրն է, Ամենաբարձրյալ Աստվածը:

Միացեք Ինձ, զավակներս, և եկեք աշխատենք որպես մեկ, որ փրկենք Իմ հոգիներին ողջ աշխարհով մեկ արագորեն: Միայն աղոթքի միջոցով դուք կարող եք օգնել Ինձ փրկելու աշխարհը:

Ձեր Հիսուս

Մարդկության Փրկիչ

Ես ցանկանում եմ կազմել աղոթախմբերի բանակ

Կիրակի, 23 հոկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ 07:15

Իմ սիրելի աղջիկ, պետք է հայտնի դարձվի, որ Ես ցանկանում եմ կազմել աղոթախմբերի բանակ աշխարհով մեկ: Ես կապահովեմ ձեզ, Իմ բանակ, աղոթքներով, որոնք կետք է ասվեն հոգիներ փրկելու համար: Այդ աղոթախմբերը կծավալվեն և նրա շարքերում **կբարձրանա նվիրյալ հետևորդների մի ճշմարիտ բանակ՝ բերելու համար Իմ աստվածային խոստման ճշմարտությունը՝** փրկություն բոլորի համար:

Այս խմբերը կկազմեն բանակը, ինչպես թելադրվել է Իմ սիրելի Հոր կողմից, որը կհաղթահարի սատանայի և նրան հավատացողների ու նրա հետևորդների կողմից ստեղծված չարի խավարը:

Այո, աղջիկս, չնայած դժվար է հասկանալ, սակայն շատերը կան, որ ոչ միայն ընդունում են սատանային, այլև նվիրված են նրան: Շատ հոգիներ կան խավարում, ովքեր հարգանք են մատուցում և կուռք են դարձնել Խավարի Թագավորին: Շատ եկեղեցիներ են կառուցվել, թաքնված իմ լույսի զավակների աչքերից, ի պատիվ սատանայի: Նրանք խոնարհվում են նրա առջև, կատարում սև պատարագներ և վիրավորում Ինձ ամեն տեսակի հայհոյություններով ու վիրավորանքներով, որոնք կցնցեն և զարշանք կպատճառեն ձեզ: Նրանց թիվն աճում է, և սատանայի նվիրված ու նվիրաբերված հետևորդներից շատերը աշխատում են **բիզնեսի, բանկային համակարգի և քաղաքական շրջանների աղդեցիկ պաշտոններում:** Նրանք միավորվում են որպես մեկ բացահայտորեն անհնազանդվելով Աստծուն՝ Իմ Հավիտենական Հորը, ամբողջապես գիտակցելով, թե ինչ են անում:

Ճիշտ ինչպես սատանան է ատում մարդկությանը, որովհետև այն ստեղծվել է Աստծո՝ ամեն բանի արարչից, **այդ սատանային նվիվածները ատում են մարդկությանը:** Նրանց զգացած ատելությունն այնքան խորն է, որ **կփորձեն կազմել մի էլիտար բանակ՝ ոչնչացնելու համար միլիոնավոր կյանքեր երկրի վրա:** Իշխանության և հարստության իրենց հետապնդման մեջ նրանք նպատակ կդնեն մաքրել ճանապարհն իրենց սեփական կարիքների համար և կցանկանան վերահսկել մարդկությանը:

Սրանք կարծրացած մեղավորների թվում են, որոնց համար Ես փնտրում եմ ձեր օգնությունը, զավակներս: Ես ձեր աղոթքների կարիքն ունեմ, որ բացեմ նրանց սրտերն այն ստերի հանդեպ, որոնց Խաբեբան է նրանց առաջնորդել հավատալու: **Նրանք կորած են Ինձ համար, եթե չխնդրեն Իմ գթասրտությունը:** Ահա թե ինչու աղոթքը կլինի նրանց փրկության միակ շնորհը:

Խաբեբայի կողմից առաջնորդվող այս հզոր բանակը **կփորձի սարսափելի ավերումներ առաջացնել:** Նրանք արդեն **փորձում են թունավորել Իմ զավակներին** ամենախորամանկ ձևերով. Ձեր **ջրի, դեղերի և սննդի** միջոցով: Խնդրում եմ, զգոն մնացեք միշտ:

Իմ Հոր ձեռքը շուտով կիջնի Նածազգուշացումից հետո այդ չար հոգիների վրա, եթե նրանք շարունակեն մերժել Իմ գթասրտությունը: Միևնույն ժամանակ, զավակներս, դուք պետք է ոտքի կանգնեք և թույլ չտաք, **որ ձեր ազգերին հիմարացնեն:** Աղոթեք Իմ պաշտպանության համար և ապրեք պարզ կյանքով: Աղոթեք և ստացեք խորհուրդները: Խնդրեք Իմ օգնությունը ամեն բանում, և Ես կպատասխանեմ ձեր աղերսներին Իմ ամենասուրբ կամքին համապատասխան:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք՝ մեղմացնելու համար աշխարհը վերահսկելու չար պլանները, որը այդ չար խումբն է նյութում: Նրանք ուժ են հավաքում Միջին Արևելքում և փորձեր են կատարում վերահսկել Եվրոպան, նախքան նշանառության տակ կդնեն աշխարհի մյուս մասերը: Թշնամիները, որոնց նրանք բացահայտում են ձեզ նորությունների տեղեկատվական աղբյուրների միջոցով, իսկական թշնամիները դրանք չեն: Նրանք ստեղծում են թշնամիներ, որպեսզի արդարացնեն վրեժը, որը միշտ կունենա նույն վերջնանպատակները. Վերահսկել, սեփականացնել, հարստություն կուտակել:

Աղոթեք նրանց համար, որ դարձի գան, քանի որ առանց դարձի նրանց չար արարքները շատ վիշտ և վհատություն կառաջացնեն: Իմ Հավիտենական Հայրն, այնուամենայնիվ, կարող է նվազեցնել Իր պատիժը, սակայն նրանք էլի կարող են վնաս հասցնել, որն անասելի տառապանք կառաջացնի Իմ զավակների մոտ:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Իմ ժամանումն ավելի շուտ կլինի, քան կարծում եք

Երկուշաբթի, 24 հոկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ. 07:09

Իմ ժամանումն ավելի շուտ կլինի, քան դուք ակնկալում եք

Իմ սիրելի ազջիկ, դու չպետք է թույլ տաս նրանց, ովքեր շարունակում են հարցաքննել և դատել Իմ ամենասուրբ խոսքը, որ անհանգստացնեն քեզ: Անտեսիր այդ հարցաքննությունները: Լուռ մնա: Աղոթիր նրանց համար և առաջ շարժվիր, քանի որ հիմա շատ ժամանակ չկա:

Ես կոչ եմ անում բոլորիդ, սիրելի զավակներ, **որ հանգիստ նստեք և աղոթեք Ինձ գթասրտության համար**: Խնդրում եմ, դուք չպետք է խուճապի մատնվեք, որովհետև **Ես գալիս եմ միայն ձեզ փրկելու համար, ոչ թե դատելու:** Մի՞թե չգիտեք սա: Վախենալու ոչինչ չկա: Պարզապես ամբողջովին վստահեք Ինձ:

Իմ հայտնվելն ավելի շուտ կլինի, քան կարծում եք, ուստի խնդրում եմ նախապատրաստեք ձեր հոգիները: Աղոթեք այն բոլոր հոգիների համար, ովքեր կժխտեն Ինձ կամ կմերժեն Իմ աստվածային գթասրտության ընծան: Դուք, Իմ փայփայած զավակներ, Ինձ այնպիսի սփոփանք եք բերում և թեթևացնում եք այն տառապանքը, որը Ես կրում եմ, երբ տեսնում եմ ամենուր ատելություն ձեր աշխարհում:

Ավելի մոտեցեք Ինձ, զավակներս և թույլ տվեք Ինձ գրկել ձեզ, տալու համար այն զորությունն ու վստահությունը, որի կարիքն ունեք Ինձ ողջունելու համար: Դուք, Իմ հատուկ բանակ, Ինձ հետ միության մեջ եք, և անկախ նրանից, հասկանում եք դա թե ոչ, **դուք առաջնորդվում եք Սուրբ Հոգու կողմից՝ կռվելու հոգիներ փրկելու համար:**

Հանգիստ նստեք փոքրիկներս և հիշեք. Ես միշտ ձեզ հետ եմ: Ուրախացեք և սպասեք Իմ Գալստյանը, երբ Ես դուրս կհեղեմ Իմ շնորհները՝ ծածկելու համա Իմ սիրելի հետևորդներին ամենուրեք:

Անկախ նրանից, թե որտեղ եք դուք ապրում, անկախ նրանից, թե դուք աշխարհի որ մասից եք, դուք Իմն եք: Ես սիրում եմ ձեզ: Նայեք բաց սրտերով և վստահությամբ, մինչ մոտենում ենք Նախազգուշացմանը:

Ձեր Հիսուս

Հայր Աստված – դուք պետք է մերժեք խավարը և գրկեք լույսը

Երեքշաբթի, 25 հոկտեմբերի, 2011թ, ցերեկվա ժ. 03:30

Իմ սիրելի աղջիկ, ասա աշխարհին, որ Ես գրկում եմ Իմ բոլոր զավակներին Իմ բազուկների մեջ: Ամեն ինչ լավ կլինի: Բոլորը հիմա պետք է մնան Իմ Սուրբ Ձեռքերի մեջ, ինչպես նախատեսված է:

Ես հրամայում եմ, որ Իմ Որդին մեկ անգամ ևս ուղարկվի աշխարհ՝ մարդկանց մեղքի կործանումից փկելու համար: Սա արդարության Իմ աստվածային գործողությունն է ձեզ համար, Իմ փայփայած զավակներ, որպեսզի Ես կարողանամ վերականգնել Իմ Թագավորությունը երկրի վրա:

Վախն Ինձնից չի գալիս: Վախը գալիս է խավարից: Երբ դուք վախենում եք Ինձնից, իմացեք, որ այդ խավարն է, որ պարուրում է ձեր հոգին, այլ ոչ թե Իմ աստվածային մեծությունը:

Որպեսզի լինեք Իմ Թագավորության մասը, դուք պետք է մերժեք խավարը և գրկեք լույսը: Այդ նույն լույսը հիմա հեղվում է ձեզ վրա Իմ Որդու Աստվածային Գթասրտության Գործողության միջոցով:

Իմ սերը ձեր բոլորիդ հանդեպ, զավակներս, այնքան մեծ է, որ Ես կօգտագործեմ Իմ ամբողջ զորությունը՝ ամենուր հոգիներ փրկելու համար: Իմ արդարադատության ձեռքը կիջնի այն հոգիների վրա, ովքեր մերժում են Ինձ, բայց ոչ նախքան ամեն ջանք կգործադրվի՝ փրկելու համար Իմ բոլոր զավակներին ամենուր:

Շուտով աշխարհին կբացահայտվի Իմ Մեծ Փառքի Թագավորությունը: Ձեզնից ոչ մեկը, զավակներս, չի ցանկանա մերժել Իմ Փառահեղ Թագավորությունը, որը կիշխի երկրի վրա խաղաղության նոր դարաշրջանում:

Աղոթեք նրանց համար, ովքեր կդժվարանան գրկել ճշմարտությունը:

Աստված՝ Ամենակարող Հայր

Կեղծ մարգարեները փորձում են նսեմացնել Իմ Սուրբ Խոսքը

Չորեքշաբթի, 26 հոկտեմբերի, 2011թ, ցերեկվա ժ. 03:30

Իմ սիրելի աղջիկ, խնդրում եմ ասա Իմ զավակներին զգոն լինել կեղծ մարգարեներից, ովքեր Խոսում են Իմ անունով, սակայն տարածում են խոսքեր, որոնք չեն գալիս Իմ շրթունքներից:

Այդ ինքնակոչ տեսանողներից շատերը, ովքեր **արտաքինից կաթոլիկ են երևում,** և դրա ու քրիստոնեական այլ ուսմունքների հետ կապված բոլոր ոճով, իրականում **Նոր դարի հետևորդներ են:**

Հիմա Նոր դարի հետևորդները կներթափանցեն աշխար՝ համոզելու համար Իմ զավակներին, որ իրենք ուղարկված են քարոզելու Իմ Սուրբ Խոսքը: Մակերևույթից նրանց խոսքերը ճշմարիտ կթվան: Նրանք կօգտագործեն հարուստ իմաստության լեզու, սիրող, լավ մտածված, սակայն կծածկեն մի սուտ:

Սա կեղծ մարգարեների դարաշրջանն է, որ հայտնվեն, և Իմ զավակներից շատերի համար դժվար կլինի զանազանել ճշմարտությունը հորինվածքից:

Հիմա այդ տեսանողների համար դու թիրախ ես դարձել, աղջիկս, ովքեր սկսել են նվաստացնել Իմ Սուրբ Խոսքը: Թույլ մի տուր դա պատահի, այլապես Իմ զավակները կներքաշվեն մի խավարի մեջ, որից դժար կլինի ազատվել:

Հիշիր սա. Այդ կեղծ մարգարեները նույնպես Իմ սիրելի զավակներն են, ուստի խնդրում եմ, աղոթիր նրանց համար: Տխուր է, սակայն նրանց սխալ ուղղությամբ են առաջնորդել հավատալու մի երևակայական ստորակարգության /հիերարխիայի/ և մի տիեզերքի, որը գոյություն չունի:

Զգուշացիր նրանցից, ովքեր դիմում են բարձրացած տերերի կամ խոսում են լույսի մի նոր դարաշրջանի մասին, ուր Հայր Աստված պարզապես դիտվում է որպես պարզապես մեկ այլ երեսակ: Այդ հոգիներն Ինձնից չեն ուղղություն ստանում: Նրանք ընդունում են հավատալիքներ՝ ներարկված Խաբեբայի կողմից: Շատ դեպքերում այդ մոլորության մեջ գտնվող հոգիները հավատում են, թե իրենք ստանում են աստվածային պատգամներ: Այսպես է Սատանան աշխատում: Նրա փափուկ, հանգստացնող խոսքերը կառաջացնեն բառերի մերկ, սառը, բայց համոզիչ մեղեդի: Դրանք չեն գալիս Ամենաբարձր Աստծուց:

Ինչպես Ես քեզ նախկինում ասել եմ, Ես խոսում եմ աշխարհի հետ պարզ ձևով: Ես չեմ օգտագործում գունագեղ լեզու՝ սառը վերադաս ձայնի կերպարանքի տակ: Ես փորձում եմ վախ չներարկել ձեր սրտերի մեջ: Ես պարզապես փորձում եմ առաջնորդել ձեզ դեպի ճշմարտությունը և ձեր ընկերոջը սիրելու կարևորությունը:

Որքան դժվար է ձեզ համար, զավակներս, այս խառնաշփոթ ժամանակներում:

Աղոթեք, աղոթեք, որ չդառնաք ստերի շարքի զոհեր, որոնք կտարածվեն կեղծ մարգարեների կողմից: Եթե նրանց պատգամները շրջված թվան, դժվար հասկանալի լինեն և վախ առաջացնեն ձեր սրտերի մեջ, դրանք Ինձնից չեն:

Զավակներս, ձեր ուշադրությունը կենտրոնացրեք միայն Ինձ վրա: Ես շատ բան ունեմ ձեզ ասելու: Թույլ մի տվեք ձեզ շեղվել նույնիսկ մեկ պահ, քանի որ դա կխանգարի ձեզ փրկելու համար այն հոգիներին, ովքեր այնքան շատ կարիք ունեն ձեր աղոթքներին:

Ձեր Հիսուս

Սպասեք հիմա Մեր փառապանծ վերամիավորմանը

Չորեքշաբթի, 26 հոկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ 10:00

Իմ սիրելի աղջիկ, դու չպետք է անհանգստանաս այն մշտական հարձակումներից, որոնք արվում են Իմ պատգամների վրա կեղծ տեսանողների կողմից:

Մինչև հիմա պետք է հասկանայիր, որ երբ Ես խոսում եմ ընտրյալ պատգամատարների հետ, ապա նրանք միշտ կլինեն ատելության թիրախ: Երբ քեզ վրա գրոհում են, հիշիր, որ Ինձ նույնպես մարտահրավեր են նետում: Իմ Սուրբ Խոսքը մասնատվում է, վերլուծության ենթարկվում, հարցականի տակ դրվում, քննադատվում և հայտարարվում , որ անարժան է Իմ շրթունքներից եկած լինելու համար:

Ոհ, որքան քիչ գիտեն Իմ զավակները: Վախն ու կասկածը կուրացնում են նրանց ճշմարտության հանդեպ: Դու կզարմանաս նաև, թե ինչպես է Իմ խոսքը այնքան հեշտությամբ բաց թողնվում ի պատիվ կեղծ պատգամների:

Քանի որ Նախազգուշացումը արդեն աշխարհի վրա է, ճշմարտությունը վերջապես ի վերջո հայտնի կդառնա Իմ բոլոր հետևորդներին: Այդ էտապում է, որ նրանք կգրկեն Իմ խոսքը, որպեսզի սրբագործեն իրենց խեղճ հոգիները: Ինչպես Ես կողջունեմ նրանց և նրանց կմոտեցնեմ Ինձ, մինչ նրանց արցունքները կմիախառնվեն Իմի հետ սիրով և միասնությամբ: Մինչև Նախազգուշացումը նրանք կշարունակեն կասկածել, սակայն նրանք Ինձ չեն մերժի Իմ առջև գալուց հետո: Քանի որ հենց որ նրանք գան Իմ առջև և տեսնեն այն սերը, որը Ես ունեմ իրենց հանդեպ, նրանք չեն ցանկանա թողնել Ինձ նույնիսկ մեկ պահ, այնքան որ խորը կլինի մեր միությունը:

Սպասեք հիմա մեր փառապանծ վերամիավորմանը:

Հիսուս Քրիստոս

Դուք, զավակներս, օրհնյալ եք, եթե տառապում եք հանուն Ինձ

Հինգշաբթի, 27 հոկտեմբերի, 2011թ. ցերեկվա ժ. 03:30

Իմ սիրելի աղջիկ, փորձությունների աճող թիվը, որոնց դու հիմա ենթարկվում ես հանուն Ինձ, պատահական չէ: Մինչ Սատանան շարունակում է տանջել քեզ, միայն մտածիր այն հոգիների մասին, որոնց դու փրկում ես այդ տառապանքի միջոցով: Փորձիր վեր բարձրանալ այդ դժվարություններից և պահիր Ինձ քո մտքերի մեջ միշտ: Աղոթիր Իմ սիրելի Մորը պաշտպանության համար և աղոթիր Սուրբ Վարդարանը որքան կարող ես հաճախ:

Կարևոր է, որ Իմ բոլոր հետևորդները պաշտպանություն խնդրեն Խաբեբայի հանդեպ, ով սպասում է ամեն մի առիթի, որ կասկած առաջացնի նրանց մտքերի մեջ:

Նա և նրա չարքերն ամենուր են: Նրանք կօգտագործեն հնարավոր ամեն տակտիկա, որ ավերածություն առաջացնեն ձեր կյանքերի մեջ: Իմացեք, որ երբ դա տեղի ունենա, ուրեմն դուք զգացվել եք Իմ ուսուցումներից և կրում եք Իմ խաչը:

Երբեք չվախենաք զավակներս, քանի որ դուք ի վիճակի եք բարձրանալ այս ամայությունից այն զորության պատճառով, որ Ես հիմա հեղում եմ ձեզանից ամեն մեկի և յուրաքանչյուրիդ վրա: Դուք կհաղթեք չարին և նրա չարությանը: Որքան շատ աղոթեք միասնաբար, այնքան մեծ կլինի զրահի պատը: Ինձ համար աշխատող զավակներից ոչ մեկը, ովքեր հալածվում են Ինձ համար աշխատելու համար, նրանցից ոչ մեկին չարը չի կարող ձեռք տալ:

Դուք, զավակներս, օրհնյալ եք, եթե տառապում եք Իմ անվամբ, չնայած ձեզ համար դժվար կլինի սա հասկանալ:

Անտեսեք այդպիսի խայթոցները: Շրջեք ձեր մեջքը: Մի արձագանքեք: Մնացեք լուռ: Աղոթեք զորության համար: Ես ձեզ հետ եմ:

Ձեր սիրող Հիսուս Քրիստոս

Իմ Եկեղեցու վրա կատարված ամենամեծ հարձակումը՝ Խաչի վրա Իմ մահից հետո

Ուրբաթ, 28 հոկտեմբերի, 2011թ, երեկոյան ժ 11:30

Իմ սիրելի աղջիկ, Իմ Եկեղեցու հավատարմությունն Իմ՝ իրենց սիրող Փրկչի հանդեպ, վերջերս սկսում է փորձության ենթարկվել իր կարողությունների սահմանից այն կողմ: **Իմ Եկեղեցին քնած է** և իր թմբիրի մեջ չի նախապատրաստվել **Հակաքրիստոսի հայտնվելուն:** Նա և նրա զինակիցներն արդեն ներթափանցել են Իմ Հոր եկեղեցիների յուրաքանչյուր ծերպի մեջ ողջ աշխարհով մեկ:

Կաթոլիկ եկեղեցին Հակաքրիստոսի թիվ մեկ թիրախն է, և նա կանգ չի առնի մինչև չշրջի առնվազն Իմ եկեղեցու կեսի գլուխները այս երկրի վրա: Այնքան անպատրաստ են Իմ կարդինալները, եպիսկոպոսներն ու քահանաները, որ նրանք **չեն կարողանա**

տեսնել այն նուրբ փոոխությունները, որոնք տեղի են ունենում եկեղեցու սեփական դասերում: Շուտով Իմ Եկեղեցու ներսում բաժանումն ակնհայտ կլինի:

Սա ամենամեծ հարձակումն է Իմ Եկեղեցու վրա խաչի վրա Իմ մահվանից հետո: Իմ խեղճ սիրելի սպասավորներ: Նրանցից շատերը անմեղ զոհեր են խավար իշխանության տիրապետության տակ, որը զգուշանում է իրեն բացահայտելուց:

Ես խնդրում եմ Իմ բոլոր սպասավորներնի սրտանց աղոթել, որպեսզի դիմակայեն այն պղծությանը, որն իրենց ճանապարհի վրա է: Նրանք պետք է աղոթեն Ինձ հետևյալ ձևով.

<<Ոհ, իմ սիրելի Հիսուս, Ես հայցում եմ Քո պաշտպանությունը և խնդրում Քո գթասրտությունը՝ փրկելու համար իմ եղբայրներին ու քույրերին քո եկեղեցու ներսում, որ զոհ չդառնան Հակաքրիստոսին: Տուր ինձ շնորհները և պաշտպանիր ինձ զորության քո զրահով, դեմ կանգնելու համար այն չար գործերին, որոնք կնյութվեն Քո սուրբ անվամբ: Ես խնդրում եմ Քո գթասրտությունը և իմ հավատարմությունն եմ երդվում Քո Սուրբ Անվանը միշտ>>:

Ոտքի կանգնեք, Իմ սրբազան սպասավորոներ, այս չարի դեմ և գազանի դեմ, ում բերանը դուրս կթափի այս պղծություններն ու ստերը:

Ուշադիր եղեք այն փոփոխությունների հանդեպ, թե ինչ ձևով կնվիրաբերվեն Իմ Մարմինն ու Արյունը: Եթե խոսքերը փոխվեն, որոնք **կմերժեն Իմ մարմնի գոյությունը Սուրբ Հաղորդության մեջ,** ապա դուք պետք է պաշտպանեք Իմ աստվածային խոստումը: Նա, ով ուտում է Իմ մարմինը և խմում Իմ արյունը, հավիտենական կյանք կունենա:

Քաջ եղեք, Իմ սրբազան սպասավորներ: Աղոթեք այն զորության համար, որի կարիքը կունենաք, քանի որ ձեր հավատն ու հնազանդությունը փորձության կենթարկվեն ձեր կարողությունների սահմանից դուրս:

Ես սիրում եմ ձեզ և պաշտպանում եմ ձեզ միշտ: Միայն ձեզնից նրանք, ովքեր **սրտով մեղմ են և հոգով խոնարհ,** նրանք օգուտ կստանան Իմ սուրբ պաշտպանությունից:

Աղոթեք Իմ բոլոր սրբազան սպասավորների համար ամենուրեք, որպեսզի նրանք չմերժեն ճշմարտության լույսը ի պատիվ խավարի ոգու, որը պատրաստվում է հայտնվել Իմ Եկեղցեու մեջ:

Ձեր Փրկիչ և Պահապան

Հիսուս Քրիստոս

Կույս Մարիամ. Բացեք ձեր սրտերը ճշմարտության հանդեպ

Կիրակի, 29 հոկտեմբերի, 2011թ, ցերեկվա ժ.04:49

Զավակս, դու պետք է աղոթես Իմ պաշտպանության համար միշտ: Քեզ առաջնորդություն է տրվում, և դու պետք է դնես քո ողջ վստահությունը Իմ սիրելի Որդու վրա:

Աղոթիր դարձի համար ամենուր: Այնքան կորած հոգիներ ձեր աղոթքների կարիքն ունեն: Երբեք մի մոռացիր սա, անկախ նրանից, թե որքան դժվար է այս ճամփորդությունը քեզ համար:

Չարի ոգին ծածկում է մարդկության մեծ մասին մի այնպիսի ձևով, որ նախկինում չի եղել: Խաբեբայի գործողություններն ուժգնանում են և շնչասպառ անում Իմ զավակներին ամենուրեք:

Նույնիսկ նրանք, ովքեր ձևացնում են, թե նվիրված են Իմ սիրելի Որդուն, չլսելու են տալիս հոգիներ փրկելու Նրա խնդրանքները: Այնքան մեծամիտ են դարձել նրանք հպարտության պատճառով, որ մոռանում են, որ Իմ Որդու Սուրբ Խոսքը միակ կյանքն է, որի կարիքն իրենք ունեն: Աղոթքը կենսական է այս ժամանակ: Նրանք, ովքեր իրենք իրենց վեր են բարձրացնում ուրիշների աչքում, մինչ հռչակում են Իմ թանկագին Որդու Խոսքը, սակայն մերժում են Նրա կանչը, կարծրացրել են իրենց սրտերը ճշմարտության հանդեպ:

Զավակներս, դուք պետք է լսեք Իմ Որդի Հիսուս Քրիստոսին հիմա: Լսեք թե ինչ է Նա ասում ձեզ: Սուրբ Հոգին, եթե դուք թույլ տաք Նրան, կբացի ձեր սրտերը ճշմարտության հանդեպ, մինչ կխոսի ձեզ հետ այս Սուրբ պատգամների միջոցով:

Ես վշտից լալիս եմ երբ տեսնում եմ, թե ինչպես է այսօր մերժվում Նրա Սուրբ Խոքը: Նրանք, ովքեր արհամարհում են Նրան, դուք պետք է հասկանաք, որ Նա գալիս է հիմա ոչ միայն ձեզ փրկելու համար: Նա գալիս է նաև սփոփելու համար ձեզ խավարի այս օրերին: Եթե ճշմարտապես հավատում եք, որ Նա կյանքի հացն է, ուրեմն թույլ տվեք Նրան, որ արթնացնի ձեր սիրո ոգին:

Աղոթեք դարձի համար ամենուրեք: Շատ ժամանակ չկա:

Ձեր սիրող Մայր

Մարիամ Երկնքի և երկրի Թագուհի

Նրանց անհավատությունը, ովքեր ձևացնում են, թե ճանաչում է Ինձ, ամենաշատն է Ինձ վիրավորում

Երկուշաբթի, 31 հոկտեմբերի, 2011թ, առավոտյան ժ 03:00

Իմ սիրելի աղջիկ, Իմ Սուրբ Խոսքը, որը տրվում է աշխարհին, մոռացկոտ՝ Իմ գոյության մասին, հոգիներ կբոցավառի շուտով, Նախազգուշացման տեղի ունենալուց հետո:

Վերջապես մարդկությունը կլսի Իմ խոսքը՝թույլ տալու Ինձ որ առաջնորդեմ իրենց դեպի Իմ Խաղաղության նոր Դարաշրջանը Երկրի վրա: Ես կոչ եմ անում Իմ բոլոր զավակներին ամենուրեք ցած դնել ձեր ձեռնոցը և լսել, երբ ձեր Փրկիչը խոսում է:

Չնայած Ես երբեք ձեզ չեմ բացահայտի երկիր Իմ Վերադարձի օրը, Ես կարող եմ ձեզ ասել, որ հիմա Ես կվերադառնամ հոգով: Ես հիմա գալիս եմ, **որ մեկ անգամ ևս փրկեմ ձեզ Նախազգուշացման ընթացքում**, որպեսզի մարդիկ դարձի գան: Խնդրում եմ, թույլ տվեք Ինձ առաջնորդել ձեզ և թույլ տվեք Իմ ամենասրբազան առաքելությունը տարածվի աշխարհով մեկ, որ Իմ զավակներին սփոփանք բերի: Ինձ դուրս մի հրեք: Մի մերժեք Իմ Գթասրտության Ձեռքը: **Թույլ մի տվեք, որ ձեր հպարտությունը կանգնի ճանապարհի վրա:**

Արթնացեք և ընդունեք, որ Ես հիմա խոսում եմ ձեզ հետ, որպեսզի Ես կարողանամ բերել ձեզ Իմ մեծ գթասրտության գոգը: Վերջապես ձեր հոգին կբոցավառվի Իմ Աստվածային շնորհների կրակներով, որոնք դուրս կհեղվեն ձեզ բոլորիդ վրա:

Բոլոր կասկածները կգնան: **Սատանայի ուժը կթուլանա արագորեն, չնայած նա բաց չի թողնի իր ճանկը մինչև ամենավերջը:**

Մինչ մտածում եք Իմ աղերսանքների մասին, դուք պետք է ինքներդ ձեզ տաք այս հարցը. Եթե հավատում եք Ինձ, ինչու՞ եք Ինձ մերժում հիմա: Ինչու՞ եք զայրույթ և ատելություն ցույց տալիս նրանց հանդեպ, ովքեր գալիս են Իմ անունով: Ինչու՞ եք դուք ինքներդ ձեզ վեր բարձրացնում Իմ եկեղեցում Իմ զավակների հաշվին: Հիշեք, որ դուք բոլորդ հավասար եք Իմ աչքում:

Եկեք Ինձ մոտ հիմա խոնարհ սրտերով: Որովհետև եթե դա չանեք, դուք չեք կարողանա օգուտ ստանալ Իմ Գթասրտությունից կամ ստանալ այն շնորհները, որոնցով Ես տենչում եմ ապահովել ձեզ:

Իմ ձայնը հիմա կոչ է անում բոլոր չհավատացողներին՝ ընդունել Իմ Հավիտենական Հոր գոյությունը:

Նախազգուշացումից հետո թույլ տվեք Ինձ օգնել ձեզ դեպի հավիտենական կյանք տանող ճանապարհին: Իմ սիրտը ցավում է, երբ Ես ականատես եմ լինում կորած հոգիների: Բայց իմացեք սա. **Ինձ ամենաշատը վիրավորում է նրանց չհավատալը, ովքեր ձևացնում են, թե ճանաչում են Ինձ:**

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս

Կույս Մարիամ. Իմ Որդու ժամանակը՝ հանձնելու Աստվածային Գթասիրության Իր ընծան

Չորեքշաբթի, 2 նոյեմբերի, 2011թ, առավոտյան ժ. 10:40

Զավակս, Իմ Որդու ժամանակը՝ հանձնելու Աստվածային Գթասրտության Իր ընծան, մոտենում է: Որպես այդպիսին, դու պետք է կենտրոնանաս հոգիներ փրկելու քո առաքելության վրա: Դու չպետք է թույլ տաս ուշադրության շեղում, որոնք քեզ հեռացնում են դարձ տարածելու ամենակարևոր առաջադրանքից:

Երկինքն ուրախանում է, քանի որ շուտով **այս Աստվածային Ընծան կներկայացվի** այն մաքուր սիրով, որն Իմ Որդին ունի Իր սրտում բոլոր հոգիների համդեպ: Զավակս, մինչ այս աշխատանքը արագանում է իր ինտենսիվությամբ, չարը կշարունակի տանջել քեզ տարբեր մարդկանց միջոցով յուրաքանչյուր հնարավորության դեպքում: Քեզ ասվել է, որ լուռ մնաս և ուշադրությունդ կենտրոնացնես Իմ Որդու վրա:

Դու զավակս, նշանակված ես՝ մեծագույն մանրամասնությամբ փոխանցելու Իմ Որդու ցանկությունը՝ խոսել մարդկության հետ այս ժամանակներում: Քաջ եղիր և խիզախ, քանի որ այս սուրբ առաքելությունը հաջողություն կունենա: Այն կանխասացավել է այնքան շուտ, և քեզ տրվել է ամեն տեսակի ուղղություն երկնքից: Բոլոր սրբերը հսկում են քեզ, քանի որ նրանք հավաքվել են ամբողջական զորությամբ՝ վստահանալու, որ այս առաքելությունը չի ձախողվի: Եվ ոչ էլ կարող է այն ձախողվել: Դու պետք է դադարես անհանգստանալ, երբ դեպքերը անհույս են թվում, քանի որ դա այն խաբեությունն է, որ կհակառակվի քեզ խաբեբայի աշխատանքի միջոցով:

Ես՝ քո սիրելի Մայրը, աշխատում եմ քեզ հետ միշտ: **Իմ միջոցով էր, որ դու նախապատրաստվեցիր գալ Իմ թանկագին Որդու առջև:** Տրված շնորհները նրա համար էի, որ քո հոգին կարողանար մաքրվել, որպեսզի դու հարմար լինեիր աշխատելու մարդկության Փրկչի հետ:

Իմ թանկագին Որդու միջոցով էր, որ դու բերվեցիր Օրհնյալ Երրորդության առջև: Սա **ամենակարևոր առաքելություններից մեկն է այն ժամանկից ի վեր, երբ Իմ Որդին ուղարկվեց ազատելու համար աշխարհը մեղքից:**

Քեզ երբեք թույլ մի տուր շեղվել այս առաքելությունից: Ոչ էլ դու պետք է տեղի տաս հեռանալու գայթակղությանը:Աղոթիր Ինձ՝ քո Մորը միշտ, պաշտպանության համար:

Քո սիրող Մայր

Երկնքի Թագուհի

Գթասրտության Մայր

Եղանակը կսկսցի ցույց տալ տարօրինակ նշաններ

Չորեքշաբթի, 2 նոյեմբերի, 2011թ, երեկոյան ժ. 07:40

Իմ սիրելի աղջիկ, եղանակը կսկսի տարօրինակ նշաններ ցույց տալ մինչ երկիրը շարժվում է դեպի մի մոր վիճակ՝ **Աստվածային գթասրտության Իմ գործողության** նախապատրաստման ընթացքում, երբ Ես գալիս եմ փրկելու համար ձեզ բոլորիդ մեկ անգամ ևս:

Ատելությունը ուժգնանում է բոլոր ազգերի մեջ: Անբավարարությունը զգացվում է ամենուրեք: Սերը միմյանց հանդեպ թույլ է, մինչ սեփական անձի հանդեպ սերը դառնում է ոչ միայն հանդուրժելի, այլև էական է համարվում՝ այսօրվա աշխարհի մեջ ընդունվելու համար:

Ես կսրբեմ ատելությունը: Ես կկնքեմ մարդկանց պլանները՝ իրենց եղբոր դեմ սարսափ պարտադրել: Ես կսրբեմ ձեր հոգիներում եղած մեծամտությունը: Բոլոր մեղքը կբացահայտվի ձեզ այնպես, ինչպես երևում է իր իրական այլանդակության մեջ Իմ աչքին:

Ինչու՞ պետք է այսօր այնքան շատ բարի սիրտ ունեցողներ իրենց մեջքը շրջեն հին ժամանակների Իմ ուսուցումների հանդեպ: Ինչու՞ հիմա: Ի՞նչ կա **Հայր Աստծո հանդեպ սիրո մեջ, որ ամոթալի է համարվում նրանց աչքում:** Ես կասեմ ձեզ: Դա այն պատճառով է, որ Իմ զավակներից այնքան շատերն են կողքի շեղվել աշխարհի հաճույքների պատճառով: Չնայած նյութական բարիքներից շատերը, որոնք հիմա նրանք փնտրում են, նրանց հասանելիության սահմանից այն կողմ են, նրանք շարունակում են մերժել Ինձ: Մարդկության հոգիները պարուրվել են մի այնպիսի խիտ խավարով, որ ժամանակ կպահանաջվի, որպեսզի Իմ լույսը փայլի և ներթափանցի նրանց հոգիների միջով:

Ինչպես եմ Ես դառը տխրության արցունքներ հեղում այն կորած հոգիների համար, ովքեր հուսահատ են փրկության այն խաղաղության նկատմամբ, որը խնդրում են: Նրանք պարզապես չեն հասկանում, որ միայն Ես կարող եմ բերել այդ խաղաղությունը իրենց հոգնած սրտերի մեջ:

Ոհ, ինչպես է Իմ սերը մոռացվել երկար ժամանակ: Ես միայն մի բեկոր եմ նրանց մտքի մեջ՝ առանց որևէ հետևանքի: Նրանք ցանկանում են մտքի և սրտի խաղաղություն, բայց չեն խնդրում այն Ինձնից: Միայն այն ժամանակ, երբ նրանք խնդրեն, Ես կկարողանամ պատասխանել: Մի՞թե նրանք չգիտեն դա:

Դուք, ովքեր սիրում եք Ինձ, սակայն ատում եք կամ զայրանում ձեր եղբոր վրա, դուք նույնպես Իմ օգնության կարիքն ունեք: **Ես չեմ ցանկանում ձեր հավատարմությունը,** եթե ուրիշների հետ բարությամբ չեք վարվում: Երբ դուք վիրավորում եք ձեր եղբայրներին ու քույրերին ինչ-որ պատճառով, դուք Ինձ եք վիրավորում: Անկախ նրանից, թե ինչպես եք արդարացնում ձեր գործողությունները, իմացեք սա. Ես զգում եմ նրանց ցավը, ում դուք վիրավորում եք: Երբ դուք Ինձ այս ձևով վիրավորում եք, դուք չեք կարող Ինձ սրտանց սեր ցույց տալ:

Սովորեք սրանից: Փնտրեք խոնարհություն ամեն բանի մեջ, նախքան կգաք Իմ առջև՝ հավատարմության երդում տալու Իմ Սուրբ Կամքին: Այս կերպ դուք հոգով մաքուր կլինեք և հարմար՝ ներս մտնելու Իմ Թագավորություն:

Դուք, զավակներս, շատ բախտավոր եք, որովհետև ձեզանից միլիոնավորները կդառնան Իմ Նոր Դրախտի մասը: Սա այն ժամանակների պատճառով է, ուր դուք ապրում եք: Ձեզնից այնքան շատրեն այսօր աշխարհում, զավակներս, հիմա կարող են փրկվել այն ձևով, որով նախորդ սերունդները չէին կարող:

Ողջունեք այս լուրը և օգտագործեք այս հնարավորությունը՝ ընդունելու համար Իմ Աստվածային Գթասրտությունը բաց և զղջացած սրտերով, քանի կարող եք:

Ձեր Փրկիչ Հիսուս Քրիստոս

Իմ պատգամատարները հիմա ձեզ հետ են, որ նախապատրաստեն ձեր հոգիները

Հինգշաբթի, 3 նոյեմբերի, 2011թ, երեկոյան ժ 09:00

Իմ սիրելի աղջիկ, կանխասացված մարգարեությունները կշարունակվեն հայտնի դառնալ և աշխարհն ականատես կդառնա դրանց այնպես, որ ոչ մեկը չի կարողանա անտեսել դրանք:

Իմ զավակներից այնքան շատերն են անտեղյակ այն ամենին, ինչ պարունակվում է **Իմ Հոր Գրքում՝ Ամենասուրբ Աստվածաշնչի մեջ:** Քիչ ուշադրություն է դարձվում **Հովհաննու Գրքին,** ուր ողջ աշխարհին տրված են վերջինի ժամանակների մանրամասնությունները: Այդ ժամանակն արդեն եկել է: Նախապատրաստվեք բոլորդ:

Հայտնության Գրքի մեջ պարունակվող ճշմարտությունը այդ է՝ ճշմարատությունը: Կարո՞ղ եք ճանաչել նշանները: Ավերածությունն աշխարհում կշարունակի ավելանալ կատաղի արագությամբ: **Ձեր դրամային համակարգին վտանգ է սպառնում մի գլոբալ խմբի կողմից,** ովքեր ոչ միայն ձեր փողն են ցանկանում, այլև ցանկանում են գողանալ ձեր հոգիները:

Մարդու չարությունն ակնհայտ է, սակայն նրա մեծ մասը թաքնված է: **Իմ պատգամատարները հիմա ձեզ հետ են,** զավակներս, որ օգնեն ձեզ նախապատրաստելու ձեր հոգիները: Անկախ նրանից, դուք նրանց ճանաչում եք որպես այդպիսին, թե ոչ, Սուրբ Հոգին, որը թագավորում է նրանց հոգիներում, դարձ կտարածի:

Նրանք, ովքեր մերժում են ձեզ հետ հաղորդակցվելու Իմ փորձերը, շատ շուտով կհասկանան ճշմարտությունը: Այդ ժամանակ է, որ Իմ զավակները կմիավորվեն սատանայի կողմից առաջնորդվող չար ուժի դեմ: **Նրանք չեն հաղթի: Իմ**

Հավիտենական Հոր ձեռքով նրանց առջև դրվում է ամեն մի խոչընդոտ: Նրա գթասրտությունն այնքան մեծ է, **որ Նա կօգտագործի Իր զորությունը՝ պաշտպանելու համար Իր զավակներին,** և Նա կոչնչացնի նրանց, ովքեր կհամառեն հետևելու խաբեբայի ուղուն:

Անկախ ձեր հայացքների տարբերությունից, թե հավատում եք թե ոչ, որ Ես հիմա խոսում եմ ձեզ հետ, դա նշանակություն չի ունենա: Իմ և Իմ Հավիտենական Հոր հանդեպ ձեր ունեցած հավատն է, որ նշանակություն կունենա վերջում:

Աղոթքն ամենահրատապն է, զավակներս, անկախ նրանից, թե որտեղ եք դուք, **անկախ նրանից, թե ինչ կրոնի եք պատկանում**, անկախ ձեր տեսակետներից: Միավորվեք և միասին աղոթեք Սուրբ Հոգուն լուսավորման համար այս ժամանակ: Սատանան փորձում է ձեր մեջքը շրջել Իմ հանդեպ՝ ձեր Սիրող Փրկչի հանդեպ: Մի լսեք այն կասկածները և վախը, որը նա դնում է ձեր սրտերի մեջ: Նա կօգտագործի ստեր, որ արգելի Ինձ ձեր հոգիները հեղեղելու Իմ Աստվածային Լույսի հոսքով: Իմ սերն այնքան ուժգին է ձեր հանդեպ, զավակներս, որ անկախ նրանից, թե ինչպես կանտեսեք դուք Ինձ կամ կշրջեք ձեր մեջքը, Ես կշարունակեմ կանչել ձեզ: Ես կանեմ դա Սուրբ Հոգու զորության միջոցով: Դուք պետք է աղոթեք այս ընծայի համար, ասելով.

<<Ով Հիսուս, ծածկիր Ինձ Քո թանկագին արյամբ և լից ինձ Սուրբ Հոգով, որպեսզի Ես կարողանամ զանազանել, որ այդ խոսքերը գալիս են Քեզնից: Խոնարհեցրու ինձ ոգով: Գթասրտությամբ ընդունիր Իմ խնդրանքները և բաց իմ սիրտը ճշմարտության հանդեպ>>:

Ես կպատասխանեմ ամենակարծրացած սրտերին, երբ նրանք ասեն այս աղոթքը:

Թույլ տվեք Ինձ հնարավորությունը՝ ձեզ դեպի Ինձ բերելու, որպեսզի Ես կարողանամ միավորել որքան հնարավոր է շատ Իմ զավակներից նախքան Մեծ Նախազգուշացումը:

Հիշեք, Իմ սերը ձեր հանդեպ երբեք չի մարի, անկախ նրանից, թե որքան դուք չլսելու կտաք միասնության Իմ հրատապ կոչը:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Գլոբալ խումբը, որ ցանկանում է ոչնչացնել ձեր բանկային համակարգը, կմասնատվի

Ուրբաթ, 4 նոյեմբերի, 2011թ, երեկոյան ժ. 07:00

Իմ թանկագին աղջիկ, Ինձնից գալիս է կյանքը, միակ կյանքը, որը մարդուն անհրաժեշտ է այստեղից դեպի հավիտենություն:

Զավակներս, դուք պետք է իմանաք, որ այս սարսափելի ավերածությունը, որը տեսնում եք ձեր շուրջը, երկար չի տևի:

Աստված՝ Իմ Հավիտենական Հայրը, **թույլ չի տա Իր թանկագին զավակներին ավելի շատ տառապել:** Դուք, զավակներս, խաբեբայի աշխատանքի զոհերն եք: Նա, ով վերահսկում է Համաշխարհայիին Խումբը, թուլանում է: Նրա ուժերը թուլանում են Իմ Հոր զորության միջոցով: Այս խումբը, որը դիտավորյալ կերպով **ոչնչացրեք ձեր բանկային համակարգը, որ ձեզնից մուրացկաններ պատրաստի,** կմասնատվի: Դուք չպետք է անհանգստանք, որովհետև **Իմ Հոր Ձեռքը կիջնի նրանց չար ուղիների վրա:**

Աղոթեք, որ այդ բոլոր մոլորված հոգիները, ովքեր ստրկաբար բնակվում են այն չարությամբ, որը հենց այդ խմբի կենտրոնում է, դարձի գան Նախազգուշացման ընթացքում:

Դուք **երբեք չպետք է հուսահատվեք, զավակներս:** Ձեր Ամենաբարձրայլ Աստծո հանդեպ սիրո միջոցով դուք կվերադառնաք ձեր ընտանիքի փարախը: **Սուրբ Երրորդությունը ձեր տունն է, զավակներս:** Ձեզնից նրանք, ովքեր ընդունեն այս փաստը, որը կբերվի դարձի միջոցով, կժառանգեն երկրի վրա Դրախտի փառապանծ ժամանակաշրջանը:

Վստահեք Ինձ միշտ: Ինձ առաջարակեք ձեր մտահոգությունները, խնդիրներն ու վախը: Թույլ տվեք Ինձ թեթևացնել ձեր ցավն ու տառապանքը: Ես այժմ չեմ ուշանա, երբ աշխարհը հանգստություն կգտնի այն ցավալի երկունքի ցավերից, որոնց դուք հիմա դիմանում եք:

Երբեք մի կորցրեք հույսը: Վստահեք Ինձ: Աղոթեք Իմ շնորհների համար, որ ավելի ուժեղ դարձնեն ձեզ: Դրեք ձեր գլուխն Իմ ուսի վրա և թույլ տվեք, որ Իմ խաղաղությունը պարուրի ձեր հոգիները: Միայն այդ ժամանակ կհասկանաք հավիտենական կյանքի Իմ փառահեղ խոստման ճշմարտությունը:

Ձեր Հիսուս

Մարդկության Փրկիչ

Հայր Աստված – Վերջին կոչ աթեիստներին

Շաբաթ, 5 նոյեմբերի, 2011թ, ցերեկվա ժ. 01:00

Աղջիկս, մարդկությանը հիմա ցույց կտրվի Իմ գթասրտության ձեռքը, մինչ Իմ որդու ժամանումը մոտենում է:

Խառնաշփոթության մեջ գտնվող բոլոր խոշտանգված հոգիներին, Ես ասում եմ ձեզ, դրեք ձեր վստահությունն Ինձ վրա՝ Հայր Աստծո վրա: Ես, ով ստեղծեց ձեզնից յուրաքանչյուրին սիրով և կարեկցանքով, ցանկանում եմ փրկել Իմ յուրաքանչյուր թանկագին զավակի:

Ես չեմ ցանկանում կորցնել ձեզնից ոչ մեկին, ներառյալ նրանց, ովքեր քմծիծաղում են Ինձ վրա: Նախապատրաստվեք այն մեծ ընծայի համար, որը նախապատրաստվում է ձեզ համար: Ես թույլ չեմ տա սատանային գողանալ ձեզ, եթե դուք Ինձ թույլ տաք: Ես չեմ կարող ձեզ ստիպել՝ ընդունելու Գթասրտության այս Գործողությունը: Ինձ տխրեցնում է այն, որ ձեզնից շատերը կմերժեն Իմ գթասրտության այս ձեռքը: Դուք բավականին ուժեղ չեք լինի: Սակայն երբ ականատես լինեք ճշմարտությանն այնպես, ինչպես այն կբացահայտվի ձեզ Նախազգուշացման ընթացքում, դուք կփորձեք ընկալել այն ինչպես փրկապարան:

Դուք պետք է Ինձ խնդրեք այն ուժը, որ թույլ տաք Ինձ փրկել ձեզ հավիտենական դատապարտումից: Ես կոչ եմ անում աթիստներին հատկապես մի վերջին անգամ: Չմերժեք ճժմարտությունը, երբ այն ապացուցվի ձեզ: Եթե մերժեք, ապա դուք ընդմիշտ կորած կլինեք Ինձ համար:

Հայր Աստված

Դիվային բռնվածությունը և ատելության մեղքը

Կիրակի, 6 նոյեմբերի, 2011թ, երեկոյան ժ 06:30

Իմ սիրելի աղջիկ, մարդիկ չեն հասկանում, որ Ես ամեն օր վերապրում եմ Իմ խաչելությունը: Այն ցավն ու տառապանքը, որը Ես կրում եմ, պատճառվում է մարդկանց կողմից օրվա յուրաքանչյուր վայրկյան կատարվող մեղքերից: Ես խորը վշտի պահեր եմ կրում, երբ տեսնում եմ այն հոգիներին, ովքեր Ինձ մեծապես վիրավորում են **ատելության մեղքի** միջոցով:

Ատելությունը ներարկված է շատերի սրտի մեջ և գալիս է Սատանայի ներթափանցումից: Շատերն են խոսում դրային բռնվածության մասին, ասես թե դա հեշտ է որոշել: Իմ զավակներից այնքան շատերն են բռնված Սատանայի կողմից: **Պարտադիր չէ, որ նրանց տեսնեն շուրջբոլորը հարվածելիս, որ հասկանան Սատանայի ներկայությունը:**

Նա՝ մարդկության թշնամին, օգտագործում է իր դևերին, որ հարձակվեն Իմ զավակների վրա: Նրանք, ովքեր խավարի մեջ են, հեշտությամբ են զոհ դառնում, որովհետև գրավում են չարի ներկայությունը:

Հենց որ նրանք տիրապետեն ձեզ, զավակներս, շատ դժվար կլինի հեռանալ դրանից: Այդ դժբախ զավակները, Չարի խորամանակ և կեղծված ներթափանցման միջոցով, վարակում են այլ հոգիների: Եվ այդպես շարունակվում է:

Չարը սովորաբար ներկայացվում է որպես բարի: Դժվար է զանազանել բացառությամբ հետևյալ միջոցի: Չարի կողմից ներթափանցման ենթարկված հոգու վարքագիծն ու արարքները երբեք խոնարհ չեն լինի իրենց էությամբ: Նրանք երբեք սրտով առատաձեռն չեն լինի:: Նրանք կարող են առատաձեռն երևալ, սակայն միշտ կլինի մի բան, որը կհուշի: Այդ հուշումները միշտ կլինեն ձեր հանդեպ պահանջների տեսքով, որոնք հարմար չեն լինի:

Հեռու մնացեք այդպիսի հոգիներից: Աղոթեք նրանց համար: Թույլ մի տվեք, որ նրանք ներքաշեն ձեզ մեղքի մեջ: Միշտ զգոն եղեք խաբեբայի հանդեպ, որովհետև նա ամենուրեք է այս ժամանակներում:

Միշտ աղոթեք, որ հեռու հալածեք այդ չարիքը Աղոթքը կթուլացնի նրա բռունցքն ու ուժը, ինչպես նաև կպաշտպանի ձեզ:

Մտածեք Սատանայի և նրա չար գործերի մասին որպես վարակիչ հիվանդության: Ամեն զգուշություն ցուցաբերեք՝ խուսափելու համար շփվել նրանց հետ, ովքեր ունեն այդ հիվանդությունը: Եթե գիտեք որ այլ ընտրություն չունեք, ապա զինվեք Սուրբ Ջրով, Օրհնված Խաչով և սուրբ Բենեդիկտի մեդալով: Նրանք հեռու կպահեն այդ չարքերց մի թևաչափ տարածության վրա:

Սրանք այն ժամանակներն են, զավակներս, որ դուք պետք է շրջապատեք ձեզ և ձեր տունը օրհնված առարկաներով, որոնք օրհնյալ են: Շատերն են ընկճվում այն մտքից, որ կերևան այդ իրերով, վախենալով, որ ծաղրի կենթարկվեն: Սրանք կապահովեն ձեզ պաշտպանություն ձեր տան մեջ, և մեծ սփոփանք են աղոթքի ընթացքում:

Հիշեք, դևն ապրում է ոչ միայն պարզապես դժոխքում, այլև հիմա հաստատուն ձևով հիմնել է իր իշխանությունը երկրի վրա: **Աղոթքը միակ բանն է, որ սարսափեցնում է նրան, և թողնում անզոր:**

Աղոթքը կպահի ձեզ, զավակներս, առջևում սպասվող ժամանակներից:

Ձեր սիրող փրկիչ

Հիսուս Քրիստոս

Քեզ կատեն աշխարհի շատ մասերում, և քեզնից կվախենան՝ ուրիշ մասերում

Երկուշաբթի, 7 նոյեմբերի, 2011թ, ժ երեկոյան 08:50

Իմ սիրելի աղջիկ, դու պետք է լսես: Մինչ Իմ մարգարեությունները ծավալվում են, և Իմ Սուրբ Խոսքը կսկսվի ընդունվել և լսվել, դու պետք է զգույշ լինես: Դու, աղջիկս, ատելի կլինես աշխարհի շատ մասերում, և քեզնից կվախենան ուրիշ մասերում:

Իմ մարգարեությունները, որոնք կտրվեն քեզ, վստահեցնելու համար են, որ Իմ բոլոր զավակների մտքերում կասկածներ չլինեն, որ հավիտենական փրկության խոստումը վերջապես կիրականացվի:

Աղջիկս, դու մեկուսացված կզգաս, մեժված, վախեցած, և դաժանորեն կտառապես հանուն Ինձ:

Առանց քո զոհաբերության Ես չէի կարողանա իրականացնել Իմ խոստումը՝ փրկելու մարդկությանը, այնպես որ յուրաքանչյուր հոգու հնարավորություն տրվի օգտվել իրավամբ իրենց պատկանող ժառանգությունից:

Ես կոչ եմ անում Իմ սրբազան սպասավորներին՝ պաշտպանել քեզ, աղջիկս, քանի որ դա կլինի նրանց սուրբ պարտականությունը: Ժամանակի ընթացքում նրանք կհասկանան, թե ինչն է իրնց դերը: Միևնույն ժամանակ Ես կոչ եմ անում Իմ բոլոր թանկագին հետևորդներին, որ աղոթեն քո պաշտպանության համար չար ուժերի դեմ, որոնց առաջնորդում է Սատանան, ով ցանկանում է ոչնչացնել աշխարհը իրենց օգուտի համար:
Ուժեղ եղիր: Աղոթիր պաշտպանության համար և կանչիր միշտ Իմ Օրհնյալ Մորը օգնության:

Քո Հիսուս

Մարդկության Փրկիչ և Ազատարար

Շատերը կզգան քավարանի ցավը որպես հատուցում

Չորեքշաբթի, 9 նոյեմբերի, 2011թ, ցերեկվա ժ 03:32

Լսեք Իմ հրատապ աղերսը՝ այս ժամանակ նվիրաբերվելու **Իմ սիրելի Մոր Անապական Սրտին:**

Նա՝ բոլոր շնորհների Միջնորդուհին, նշանակվել է որ բերի ձեզ դեպի Իմ Սուրբ Սիրտը, որպեսզի փրկի մարդկությանը այն ավերածությունից, որը սպասվում է նրանց, եթե չկարողանան ազատել իրենց Սատանայի գործերից:

Հիմա հրատապ է, որ դուք բոլորդ սրտանց աղոթեք հոգիների փրկության համար: Բոլոր հոգիները գալու են Իմ առաջ, և շատերի համար՝ նրանց համար դժվար կլինի: **Շատերը կտառապեն քավարանի ցավերով,** սակայն այն կլինի նրանց համար միակ ճանապարհը դեպի հավիտենական փրկություն: Շատ ավելի լավ է սա հասկանալ, թե ինչ է դա, քանի դեռ կենդանի եք այս երկրի վրա, քան թե զգաք դա մահից հետո: Երբ այդ հոգիները դիմանան այս պատժին, նրանք կմաքրագործվեն և **հարմար կլինեն մտնելու Իմ Նոր Դրախտը երկրի վրա:** Միայն մաքուր հոգիները կկարողանան մտնել: Ես պետք է կոչ անեմ ձեզ ընդունելու այս ընծան և դիմակայել դրան մտքի, մարմնի և հոգու զորությամբ: Սակայն իմացեք և ճանաչեք այն ինչպես որ կա. ճանապարհ դեպի

հավիտենական կյանք, հնարավորություն Իմ Աստվածային Գթասրտությունը հասկանալու համար:

Ժամանակն է նախապատրաստել ձեր հոգիները հիմա: Երբ դուք ձեր մեղքերից թողություն եք փնտրել նախքան Նախազգուշացումը, դուք պետք է աղոթեք մյուսների համար: Նրանք կարիք ունեն ուժեղ լինելու:

Աղոթեք Իմ Աստվածային Գթասրտության աղոթքն ամեն օր այսօրվանից: Դուք բոլորդ: Այն կօգնի փրկել այն խողճ հոգիներին, ովքեր կմահանան շոկից այդ գերբնական երևույթի ժամանակ: Դա շուտով կներկայացվի աշխարհին:

Երբեք հույսը մի կորցրեք, զավակներս: Հավատացեք Ինձ, երբ Ես ձեզ ասում եմ, որ Ես ձեզ սիրում եմ: Ես բերում եմ ձեզ այս ընծան այդ սիրուց ելնելով:

Ձեր սիրող Փրկիչ

Երկու գողերը խաչի վրա

Հինգշաբթի, 10 նոյեմբերի, 2011թ, ցերեկվա ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, երբ Ես մեռնում էի խաչի վրա, երկու գողեր էլ էին Ինձ մոտիկ, նրանք նույնպես խաչվել էին այդ ժամանակ:

Նրանցից մեկն Ինձ խնդրեց, որ ներեմ իր մեղքերը և փրկվեց: Մյուսը՝ ոչ: Դրա փոխարեն նա փակեց ականջները: Նրա համառությունն ու Ինձնից գթասրտություն խնդրելու մերժումը նշանակում էր, որ նա չէի կարող փրկվել:

Նույն բանը տեղի կունենա Նախազգուշացման ընթացքում: Իմ զավակներից ոմանք կընդունեն իրենց մեղքերը և կընդունեն, որ իրենք վիրավորել են Ինձ: Նրանք, ամբողջական խոնարհությամբ, կընդունեն իրենց պատիժը և կփրկվեն: Նրանք կմտնեն նոր Դրախտ՝ Խաղաղության գալիք Դարաշրջանում:

Կլինեն նաև այնպիսիք, ովքեր չեն ընդունի իրենց մեղքերն այնպես, ինչպես կան: Դա պղծություն է Աստծո՝ Հավիտենական Հոր աչքում:

Ես այդ հոգիներին բավականին ժամանակ կտամ, որ ապաշխարեն, այսպիսին է Իմ գթասրտության խորությունը: Աղոթեք, որ նրանք թողություն փնտրեն, որպեսզի իրենք նույնպես կարողանան փրկվել: Ես ցանկանում եմ, որ Իմ բոլոր զավակները գրկեն գթասրտության Իմ մեծ ընծան: Ես ցանկանում եմ, որ դուք բոլորդ ներս մտնեք Նոր Դրախտի դարպասներից:

Աղոթեք, որ հարյուրավոր հոգիներ մեղմանան և ընդունեն Իմ ձեռքը: Աղոթեք, որ նրանք սովորեն, թե ինչպես դառնան խոնարհ Իմ աչքում:

Ձեր Հիսուս

Մարդկության Փրկիչ

Սկզբում երկնքում նշաններ կերևան – արևը կպտտվի

Ուրբաթ, 11 նոյեմբերի, 2011թ, ցերեկվա ժ 04:00

Աղոթքը, և շատ աղոթքը, անհրաժեշտ է փրկելու համար ձեր հոգիները հիմա: Դու, աղջիկս, պետք է նախապատրաստես քո ընտանիքը և **ասես Իմ մեծ գթասրտության կարիքն ունեցողներին, որ պատրաստ լինեն:**

Մեկ անգամ ևս՝ **սկզբում կերևան նշանները:** Շատերը կնստեն և ուշադրություն կդարձնեն, երբ տեսնեն փոփոխությունները երկնքում: Նրանք ականատես կլինեն **արևին պտտվելիս, ինչպես երբեք նախկինում:** Հետո նրանք կտեսնեն խաչը: **Սա տեղի կունենա անմիջապես նախքան աստղերը կբախվեն երկնքում**, և երբ Աստվածային Գթասրտության Իմ ճառագայթները կծածկեն երկիրը:

Լռություն կհետևի այնպես, որ յուրաքանչյուր հոգի կլինի բացարձակ մեկուսացվածության մեջ, երբ նրանք գան Իմ առջև: Ասա Իմ զավակներին, թե ինչին ուշադրություն դարձնեն, քանի որ **նրանք չպետք է վախենան:** Այս դեպքը վախենալու համար չէ: Դրա փոխարեն դուք պետք է բոլորդ ողջունեք այդ հանդիպումը:

Իմ բոլոր զավակները **պետք է ընդունեն, որ այդ Ես եմ, որ հիմա գալիս եմ իրենց առջև:** Նրանք չպետք է մտածեն, թե դա աշխարհի վերջն է: Քանի որ այդպես չէ: Դա ժամանակի մի նոր հատվածի սկիզբն է, երբ Իմ բոլոր զավակները վերջապես կիմանան ճշմարտությունը:

Ես ուրախանում եմ և մեծ քնքշություն եմ զգում յուրաքանչյուր հոգու հանդեպ, ովքեր կարող են ազատագրվել, եթե Ինձ թույլ տան որ իրենց տամ այդ ընծան:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք բոլոր հոգիների համար հիմա, և հատկապես նրանց համար, ովքեր այնքան կվախենան, որ չեն կարողանա ընդունել Գթասրտության Իմ ձեռքը:

Ձեր Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Ձեր փառքի պահը Իմ աչքերի առջև - ձեր փրկության պահը

Շաբաթ, 12 նոյեմբերի, 2011թ, ցերեկվա ժ 04:00

Իմ սիրելի աղջիկ, Ինձնից բաժանումը ծանր է հատկապես նրանց համար, ովքեր ճանաչում են Ինձ:

Երբ հոգիները տեսնում են այն սերը, որը Ես ունեմ իրենց հանդեպ, նրանց համար **դժվար է դառնում բաժանման ցավը:** Սա նույնիսկ ավելի շատ է ասվում,մ երբ հոգիները, որոնք սիրում են Ինձ, մեղքի պատճառով իրենց գտնում են քավարանում մահից հետո:

Չնայած քավարանում գտվող բոլոր հոգիները ի վերջո երկինք են գնում, Ինձնից անջատված լինելու ցավը ցավալի է և ընկճող:

Աստծուն հավատացող շատ հոգիների համար **դժոխքի անունը միայն տառապանք է պատճառում նրանց սրտերին:** Իսկ նրանք, ովքեր հասկանում են որ իրենց հոգիները պետք է մաքրագործվեն քավարանում, նրանք նույնպես թշվառություն են զգում, որը դժվար է հասկանալ նրանց կողմից, ովքեր կենդանի են այսօր:

Զավակներս, երկրի վրա ձեր ժամանակն այնքան կարևոր է, քանի որ այդ հատվածում է, որ դուք պետք է ձգտեք մաքրագործել ձեր հոգիները պահեցողության և հատուցումների միջոցով: Օգտագործեք այս ժամանակտ, քանի դեռ կարող եք, որ փրկեք ձեր հոգիները: Դա անելու համար դուք պետք է միշտ խոնարհություն փնտրեք, վստահանու համար, որ փոքր եք դարձել Իմ աչքում: Միայն փոքրերը կարող են անցնել դրախտի նեղ դարպասներից ներս:

Ուրեմն ողջունեք քավարանի ընծան, որը կներկայացվի ձեզ Նախազգուշացման ընթացքում, երբ դուք պետք է մաքրագործվեք, որպես հատուցում ձեր մեղքերի համար: **Պետք չէ սպասել մահվանը, զավակներս, այդ մաքրագործման դեմ կանգնելու համար:** Դուք օրինյալ զավակներ եք, քանի որ ձեր հոգիների վրա չի մնա մեղքի ոչ մի բիծ: Հետո դուք կկարողանաք անմիջապես հասնել Խաղաղության այն Նոր դարաշրջանն, որի մասին Ես խոսել եմ: Այնտեղ կտարվեն Իմ բոլոր զավակները, ովքեր Նախազգուշացման ընթացքում իրենց մեղքերի համար թողություն կփնտրեն:

Բացեք ձեր սրտերը և ողջունեք Ինձ, երբ Ես գամ ձեզ մոտ սպասվող Նախազգուշացման ընթացքում, երբ դուք կկարողանաք գրկել Ինձ: Թույլ տվեք Ինձ բռնել ձեզ և ներել ձեր մեղքերը, որպեսզի դուք դառնաք Իմը մարմնով, մտքով և հոգով վերջապես, և այն ամբողջական հանձնմամբ, որի կարիքը Ես ունեմ ձեր կողմից:

Սա կլինի ձեր Փառքի պահը Իմ աչքերի առջև: Հետո դուք պատրաստ կլինեք երկրորդ էտապի համար, երբ կկարողանաք միանալ ձեր եղբայրներին ու քույրերին Նոր Դրախտում երկրի վրա, ինչպես այն ստեղծվել էր սկզբում Աստծո կողմից՝ ամեն բանի արարչի կողմից:

Դա կդառնա **ձեր նոր և իրավամբ ձեզ պատկանող տունը 1,000 տարի:** Սիրով սպասեք Իմ ժամանմանը, հույսով և ուրախությամբ: Վախենալու ոչինչ չկա: Ուրախացեք: Ես մեկ անգամ ևս գալիս եմ, որ փրկեմ ձեզ մարդկության թշնամուց: Այս անգամ նրա զորությունն այնքան թույլ է, որ նրա համար դժվար կլինի խլել նրանց հոգիները, ովքեր կողջունեն Ինձ բացված բազուկներով Նախազգուշացման ընթացքում:

Ձեր Հիսուս

Մարդկության Ազատարար

Աղոթեք, հանգստացեք և ուրախացեք, քանի որ այս ժամանակը կարճ է հիմա

Կիրակի, 13 նոյեմբերի, 2011թ, երեկոյան ժ 07:00

Իմ սիրելի աղջիկ, **երբեմն Իմ պատգամները շփոթեցնում են քեզ: Բայց դա լավ է:** Իմ ուղիները և Իմ Հավիտենական Հոր կողմից կազմված աստվածային պլանները դժվար է հասկանալ:

Մտքերդ Ինձ վրա պահեք: Կենտրոնացեք միայն աղոթքի վրա և հատկապես այն աղոթքների վրա, որոնք կօգնեն փրկելու հարյուրավոր մեղավորների դժոխքի կրակներից:

Անցկացրեք այս ժամանակահատվածը հանդարտ մտահայեցողության և պարզ աղոթքի մեջ: Սա է այն ամենը, ինչի վրա պետք է կենտրոնանան Իմ բոլոր զավակները: Նրանք պետք է նպատակ դնեն **Ինձ մոտ բերել իրենց ընտանիքներին ու ընկերներին՝ Իմ ժամանմանը նախապատրաստվելու ընթացքում:**

Աղոթեք, աղոթեք, աղոթեք Իմ Աստվածային Գթասրտության աղոթքը՝ ապահովելու այն հոգիների համար փրկություն, ովքեր այնքան վարակված են չարով, **որ նրանց միակ փրկությունը կլինի ձեր աղոթքների միջոցով:**

Մի փորձեք բացատրել այս ժամանակները ձեր երեխաներին, քանի որ նրանք չեն հասկանա: **Շատերի մոտ այն վախ կարող է առաացնել, որի կարիքը չկա:**

Ես նորից ասում եմ Իմ բոլոր թանկագին զավակներին. **Ես գալիս եմ ձեզ փրկելու համար: Հիշեք սա:** Եթե Ես չգայի այս ժամանակ, դուք Ինձնից հեռու կսահեիք չարի ուժի պատճառով, որն այնքան գերիշխող է այսօր աշխարհում:

Ես ձեր փրկությունն եմ: Ձեր փախուսը սարսափներից, որոնց ականատես եք լինում ամեն օր՝ առաջ բերված սատանայական ազդեցությամբ, որ կողմն էլ որ նայում եք: Զավակներս, դուք պետք է վստահեք ձեր հանդեպ ունեցած Իմ սիրուն: Մի՞թե չգիտեք, որ Ես թույլ չէի տա ձեզ բոլորիդ շարունակել այդ չարությունը:

Դուք բոլորդ զավակներս, Ես խոստանում եմ ձեզ սա. **Դուք կվայելեք Դրախտի նոր Դարաշրջանը որպես Իմ ընտրյալ զավակներ:** Սակայն յուրաքանչյուր մարդուց, կնոջից և երեխայից կախված կլինի, թե **արդյոք ինքը կցանկան միավորվել որպես մեկ՝ վայելելու համար այդ փառապանծ գոյությունը:**

Աղոթեք, հանգստացեք և ուրախացեք, քանի որ այդ ժամանակը կարճ է հիմա:

Գովաբանություն երգեք Իմ Հավետանական Հորը այն փառքի համար, որը Նա կհեղի բոլոր նրանց վրա, ովքեր կընդունեն Իմ Գթասրտության ձեռքը:

Ձեր սիրող Հիսուս

Մարդկության Փրկիչ

Իմ խոսքը չի մերժվում վախի պատճառով, այլ հպարտության մեղքի պատճառով

Երկուշաբթի, 14 նոյեմբերի, 2011թ, երեկոյան ժ 08:15

Իմ սիրելի աղջիկ, ինչու՞ են մարդիկ բարդացնում Իմ ուսուցումները: Իմ զավակներից այնքան շատերն են սխալ հասկանում և թերագնահատում Իմ Մեծ Գթասրտությունը: Չնայած այն բազում անգամներին, որ Ես Իմ զավակներին խոստանում եմ թողություն իրենց մեղքերի համար, նրանք շարունակում են վախենալ, որ Ես չեմ կարող ներել բոլոր մեղքերը, անկախ նրանից, թե որքան ծանր է մեղքը:

Չարիքն աշխարհում պատճառվում է այն ատելության հետևանքով, որը Սատնան ունի մարդկության հանդեպ: Այդ խեղճ մոլորված մեղավորները, ովքեր ստրկաբար հետևում են խաբեության ուղուն, Իմ սիրելի զավակներն են: Ես սիրում եմ նրանցից յուրաքանչյուրին և Ես կշարունակեմ սիրել նրանց, չնայած նրանց հոգու խավարին: Իմ սերը հարատև է, և երբեք չի մեռնում, երբ խոսքը բոլոր հոգիների մասին է: **Ես պատրաստ եմ ամբողջապես ներել և գրկել բոլորին**: Ես նախապատրաստված եմ ամեն ինչ անելու, որ բերեմ բոլոր մեղավորներին ետ դեպի Իմ փարախը, անկախ նրանից թե որքան են նրանք Ինձ վիրավորում:

Սատանան կկանգնեցվի այդպիսի հոգիներին գողանալուց: Բայց, **դա կլինի միայն այն դեպքում, երբ մեղավորներն անտեսեն մեղքի զրահը, որ կարողանան շրջվել դեպի Ինձ և դառնան Իմ փայփայած ընտանիքի մի մասը** նորից: Սխալ մի հասկացեք: Ես միայն կարող եմ հոգիներին ավելի մոտեցնել Ինձ: **Ես չեմ կարող նրանց ստիպել, որ սիրեն Ինձ:** Ես չեմ կա րող ստիպել նրանց, որ մտնեն Դրախտի իմ Թագավորությունը: Նրանք պետք է սկզբում ընդունեն հաշտության Իմ ձեռեռքը իրենց սեփական ազատ կամքով:

Ես, աղջիկս, ինչպես քեզ բազմաթիվ անգամներ ասել եմ, առաջին հերթին **Գթասրտության Աստված եմ:** Իմ արդարադատությունը կնյութկանանա, **բայց միայն այն ժամանակ, երբ ամեն ինչ արվել է՝ փրկելու համար յուրաքանչյուր հոգու երկրի վրա:**

Աղջիկս, այս աշխատանքը քեզ համար երբեք հեշտ չի լինի: Քանի որ Ես քեզ տվել եմ այսպիսի մի սուրբ առաջադրանք այդքան մեծ չափերով, այն քո կողմից հսկայական ուժ կպահանաջի: Դու պատրաստված ես ուժեղ լինելու համար: Դու նախապատրաստվել ես այս աշխատանքի համար քո մոր արգանդից դուրս գալուց ի

վեր: Քո բոլոր արձագանքները Իմ Ամենասուրբ ուսուցումների հանդեպ եղել են ըստ մարդկության համար Իմ աստվածային պլանի: Քանի որ դու Ինձ հետ միության մեջ ես (մի՞թե մոռացել ես դա), ապա **դու կտառապես այն նույն մերժումը, որը Ես կրեցի երկրի վրա Իմ գտնվելու ընթացքում:** Այդ նույն մերժումը նրանց կողմից, ովքեր պարծենում են Իմ ուսուցումների իրենց ինտելեկտուալ գիտելիքներով, որպեսզի մերժեմ Իմ այս պատգամները, որոնց դուք ականատես եք լինում այսօր աշխարհում: Այդ **հոգիները լցոնված են հպարտությամբ, իսկ Սուրբ Գրվածքների իրենց հռչակած գիտելիքը չի կարողանում հասկանալ դա:**

Իմ ուսուցումները շատ պարզ են: Որքան էլ ցանկանում եք ավելացրեք գեղեցիկ լեզու և արձակագրություն, ճշմարտությունը մնում է այնպիսին, ինչպիսին միշտ եղել է: **Սիրեք միմյանց այնպես, ինչպես Ես եմ ձեզ սիրում:** Միայն այն դեպքում, երբ դուք հարգանք կցուցաբերեք միմյանց հանդեպ և կսիրեք միմյանց, **դուք կկարողանաք ճշմարտապես հռչակել Իմ խոսքը:**

Այնքան շատ խառնաշփոթություն գոյություն ունի, աղջիկս: Այնքան շատ վախ և սարսափ է ներարկված Իմ զավակների մեջ իրենց ապագայի հանդեպ: Եթե միայն հոգիները հանդարտվեն և աղոթեն գթասրտության համար, այդ դեպքում նրանց աղոթքներին պատասխան կտրվի: **Աղետներից կխուսափեն և կարող են խուսափել:** Հույսը կենդանի պահեք ձեր հոգիների մեջ, զավակներս: Երբեք ճահճի մեջ մի ընկեք՝ դատելով միմյանց, և հաստատապես այդպես մի վարվեք Իմ անվամբ:

Ով համարձակվում է դատել ուրիշին ծաղրի, քրիստոնեության անվան տակ, ստիպված կլինի կանգնել Իմ առջև: Նա, ով մեղանչում է Իմ մարգարեների դեմ, նույնպես ստիպված կլինեի Ինձ պատասխան տալու: Իմ խոսքը չի մերժվում սիրուց ելնելով: Իմ խոսքը չի մերժվում վախից դրդված: Ոչ, այն մերժվում է հպարտության մեղքի պատճառով:

Ձեր Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Հայր Աստված խնդրում է Իր զավակներին միավորվել աղոթքի միջոցով

Երեքշաբթի, 15 նոյեմբերի, 2011թ, առավոտյան ժ 11:00

Ես գալիս եմ այսօր, աղջիկս, որ հավաքեմ միասին Իմ թանկագին զավակներին և բոլոր նրանց, ովքեր հավատում են Ինձ, որպեսզի **աղոթեն միասնության մեջ՝ փրկելու համար երկրի վրա բոլոր հոգիներին:**

Իմ ցանկությունն է, որ դուք ապացուցեք ձեր անսահման սերը Օրհնյալ Երրորդության հանդեպ, սիրով խոնարհություն ցույց տալով միմյանց հանդեպ, **որպեսզի հնարավոր լինի ներել մեղքը ողջ մարդկության համար:**

Ես Արդարության Աստված եմ, բայց Ես նախ և առաջ Սիրո և Գթասրտության Աստված եմ: Իմ Հայրական Աստվածային սերը ձեր հանդեպ արտացոլված է Իմ գթասիրտ բարության մեջ: Որպես այդպիսին, Իմ մտադրությունն է **փրկել բոլոր հոգիներին այս վերջին ժամանակներում, ինչպես որ գիտեք, երկրի վրա:** Մի վախեցեք, զավակներս: Ես մտադիր չեմ վախեցնել, այլ գրկել ձեզ Իմ ամեն ինչ ընդգրկող սիրո մեջ՝ Իմ յուրաքանչյուր զավակին:

Ես կոչ եմ անում Իմ բոլոր զավակներին, հատկապես այն հոգիներին, ովքեր այնքան լի են սիրով Իմ հանդեպ՝ իրենց Արարչի հանդեպ, որ միանաք ձեր եղբայրներին ու քույրերին և բարձրանաք աշխարհում չարի դեմ:

Սատանան և դժոխքի բոլոր դևերը հիմա թափառում են երկրի վրա՝ մրցակցելով Ինձ հետ այս վերջին ժամանակներում, զավակներս: Նրանք ցրված են աշխարհով մեկ՝ հետապնդելով հոգիներին և հասցնելով նրանց խելագարության եզրին:

Չար ազդեցությունը զգացվում է համարյա ձեզանից յուրաքանչյուրի կողմից այս ժամանակ: **Դա այն պատճառով է, որ Իմ և Իմ սիրելի Որդու գոյությունը մերժվել է, ժխտվել և մի կողմ նետվել, որ խավարը ծածկում է աշխարհը:** Առանց այս երկրի վրա ձեր արարման ճշմարտությունն ընդունելու, Իմ սիրելի զավակներ, դուք ակամա դարձել եք Սատանայի թիրախը:

Դուք ձեր կյանքում մի շարք փոփոխություններ կնկատեք, ինչ այս թունավորումը բռնել է աշխարհը: **Սպանություն, ատելություն, դժգոհություն՝ Իմ փառքը հոկակելու կամ Իմ գոյությունը ճանաչելու համար, պատերազմ, հալածանք, ագահություն, վերահսկողություն և բարոյական քայքայում:** Այս ողջ չարությունը ստեղծվել է ձեր աշխարհում Սատանայի կողմից և **տարածվել մեղավորների կողմից, ովքեր այնքան բաց են նրա դատարկ խոստումների հանդեպ:**

Նա՝ Սատանան, սկզբում գայթակղեցնում է իշխանության ծարավ հոգիներին և նրանց, ում հավատը թույլ է: Նրանց խոնարհեցնելով, նա հետո տիրապետում է նրանց: Հետո, թունավորում և սարսափելի ցավ առաջացնում՝ պարտադրելով չարություն իրենց ընկեր եղբայրների և քույրերի հանդեպ:

Դուք, Իմ սիրելի հավատարիմներ, հիմա կանչվում եք Իմ կողմից՝ ոտքի կանգնելու և պաշտպանելու Իմ Սուրբ Խոսքը, որպեսզի մարդկությունը կարողանա փրկվել: **Դուք կանեք դա երկու ձևով.** Առաջինը՝ մշտական աղոթքի միջոցով և երկրորդը՝ տարածելով Իմ Ամենասուրբ Խոսքը: Աղոթքը ոչ միայն կօգնի փրկել մարդկությանը դժոխքից և Իմ կողմից ամբողջապես լքվելուց, այլև այն կմեղմացնի Իմ պատժի ձեռքը: **Պատժի այդ ձեռքը կիջնի, առանց կասկածի, այն չար մեղավորների վրա,** ովքեր թույլ են տվել խավարի ոգուն վերահսկելու իրենց վարքը այն անմեղ իրենցից կախում ունեցողների վրա, որոնց վրա նրանք վերահսկողություն են գործադրում:

Ես՝ Հայր Աստված, կանչում եմ Իմ զավակներին երկնքից՝ լսելու Իմ աղերսը, երբ Ես կոչ եմ անում ձեզ անմիջապես բարձրանալ: Միավորվեք աղոթքով, ասելով հետևյալը.

<<Ամենաբարձրյալ Աստված, հանուն քո սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի, ում Դու զոհաբերեցիր՝ փրկելու համար մեզ՝ Քո խեղճ զավակներին դժոխքի կրակներից, լսիր

մեր աղոթքը: Թույլ տուր մեզ առաջարկել մեր խոնարհ զոհաբերությունները և ընդունել փորձություններն ու փորձանքները որպես միջոց՝ շահելու համար բոլոր հոգիների փրկությունը Նախազգուշացման ընթացքում:

Մենք աղերսում ենք Քեզ՝ ներել մեղավորներին, որոնց համար դժվար է ետ շրջվել և ընդունել Քո գթառատ բարությունը, կատարել այն անհրաժեշտ զոհաբերությունները, որոնք Դու հարմար կգտնես՝ ազատագրելու համար նրանց Քո Սուրբ Աչքում>>:

Աղոթելով Ինձ՝ ձեր Երկնավոր Հորը՝ Ամենաբարձրյալ Աստծուն, Տիեզերքի և մարդկության Արարչին, Ես կլսեմ ձեր աղոթքը և անվարակելիություն (իմունիտետ) կշնորհեմ այն բոլոր հոգիներին, որոնց համար դուք աղոթում եք:

Շնորհակալ եմ, Իմ փայփայած զավակներ, որ ճանաչեցիք Իմ այս կանչը երկնքից: Շնորհակալ եմ ձեր սրտի խոնարհության համար՝ ճանաչելու Իմ ձայնը, երբ Ես խոսում եմ:

Հիշեք, Ես ողորմության օվկիանոս եմ և սիրում եմ ձեզ բոլորիդ Հայրական քնքշությամբ: Ես ձգտում եմ միայն փրկել ձեզնից յուրաքանչյուրին և ամեն մեկիդ Չարի ճանկից, որպեսզի մենք կարողանանք միավորվել որպես մեկ Սուրբ Ընտանիք:

Աստված՝ Հավիտենական Հայրը

Կույս Մարիամ. Աղոթեք Բենեդիկտ Պապի համար

Չորեքշաաբթի, 16 նոյեմբերի, 2011թ, առավոտյան ժ 08:00

Զավակս, կատաղի պայքար կլինի, **մինչ հգիների համար պայքարն սկսվում է:** Աղոթեք այն բոլոր խեղճ հոգիների համար, ովքեր Իմ Որդու Գթասրտության պաշտպանության կարիքն ունեն:

Չարիը կանի ամենը, ինչ կարող է, որ զավակներին ետ դարձնի Իմ Որդու գթասրտության ձեռքից:

Իմ խեղճ կորած հոգիներից այնքան շատերը գաղափար չունեն այն մարտի մասին, որն արդեն սկսվել է, և որն առաջնորդվում է Չարի կողմից: Նրա օրերը կարճ են հիմա, զավակս, բայց դու պետք է անես ինչ կարող ես, որ օգնես Իմ թանկագին Որդուն՝ փրկելու համար այդ մարդկանց նախքան չափազանց ուշ կլինի:

Դու, զավակս, պետք է Ինձնից պաշտպանություն խնդրես, որովհետև դառնում ես մի իսկական փուշ Չարի կողի մեջ: Զգոն եղիր ամեն պահ: Աղոթքը կարևոր է, և դու պետք է խնդրես ուրիշներին, որ աղոթեն քեզ համար:

Աղոթեք Բենեդիկտ Պապի համար հատկապես հիմա, քանի որ նա նույնպես հարձակման տակ է: Երբեք չտատանվես Իմ Որդու աշխատանքի համար, քանի որ

դու, զավակս, պետք է դիմանաս մինչև ամենավերջը, որպեսզի իրականացվեն այնքան վաղ կանխասացված մարգարեությունները:

Հիշիր, Ես ծածկում եմ քեզ Իմ սուրբ թիկնոցով միշտ:

Ձեր Երկնային Մայր

Վարդերի Թագուհի

(Ծանոթագրություն. Այս պատգամը ստացվեց Օրհնյալ Մոր երևումից հետո, որը տևեց 20 րոպե, որի ժամանակ Նա չափազանց տխուր էր) <<Մարիամ Աստվածային Գթասրտություն>>

Նախապատրաստություններն արդեն ավարտված են

Չորեքշաբթի, 16 նոյեմբերի, 2011թ, երեկոյան ժ 08:30

Իմ սիրելի աղջիկ, ուշ դարձրու հիմա: Խնդրում եմ վստահեցրու Իմ բոլոր զավակներին, որ հավատը կապահովի իրենց փրկությունը:

Իմ և միմյանց հանդեպ սերը կլինի Դրախտ տանող ուղին:

Եթե սիրում եք միմյանց այն ձևով, ինչպես Ես եմ ձեզ սիրում, այն պետք է լինի անվերապահ: Դուք պետք է ընդունեք միմյանց թերությունները: Ներեք, զավակներս: Կռվելը երկնքից չի դուրս գալիս: Դա առաջացնում է Խաբեբան, պառակտություն ստեղծելու համար:

Բարձրացեք հիմա և աղոթեք, աղոթեք, աղոթեք, քանի որ Իմ Մեծ Գթասրտության ժամանակը համարյա ձեզ վրա է:

Նախապատրաստությունները հիմա ավարտված են:

Հիմա պարզապես սպասեք:

Նախապատրաստեք ձեր հոգիները և աղոթեք միմյանց համար: Պարզապես ընդունեք Իմ Սուրբ Կամքը, աղջիկս:

Բացատրություններ մի հարցրու: Հետևիր Իմ ցուցմունքներին և միշտ խոնարհություն ցույց տուր: Մի ընկիր քեզ համար նախապատրաստված թակարդների մեջ, որոնք քո անկումը խրախուսելու համար են: Սատանան ցանկանում է, որ դու ընկնես, որ կարողանա ոտնակոխ անել քեզ, բայց Ես պետք է նորից հիշեցնեմ քեզ, որ լուռ մնաս: Տառապիր յուրաքանչյուր նվաստացում խոնարհված աչքերով ամբողջական խոնարհության մեջ:

Կրկնօրինակիր Ինձ, աղջիկս, ամեն ինչում, որ անում ես: Երբ դա անես, Սատանան չի կարողանա քեզ իր ուզած ձևով մարտի մեջ ներքաշել:

Գնա հիմա և սպասիր: Քանի որ Ես գալիս եմ շուտով:

Ձեր Սիրող Հիսուս

Փրկիչ և Ազատարար ողջ մարդկության

Աղոթքի Խաչակրաց արշավանք (1) <<Իմ ընծան Հիսուսին՝ հոգիներ փրկելու համար>>

Հինգշաբթի, 17 նոյեմբերի, 2011թ, երեկոյան ժ 09:00

Իմ սիրելի աղջիկ, խնդրում եմ, խնդրիր Իմ զավակներին աղոթել այս աղոթքները այժմվանից սկսած մինչև Նախազգուշացումը: Իմ հետևորդներին խնդրում եմ աղոթել այս աղոթքները, որոնք Ես ձեզ կտամ ամեն օր՝ հոգիներ փրկելու համար: Սա առաջին աղոթքն է.

Իմ ընծան Հիսուսին՝ հոգիներ փրկելու համար

Իմ ամենաթանկագին Հիսուս, Դու, ով մեզ այնքան շատ է սիրում, թույլ տուր ինձ իմ խոնարհ ձևով օգնել փրկելու Քո թանկագին հոգիներին: Գթա բոլոր մեղավորներին, անկախ նրանից, թե որքան ծանր են նրանք վիրավորել քեզ:

Թույլ տուր ինձ աղոթքի և տառապանքի միջոցով օգնել այն հոգիներին, որոնք չեն դիմանա Նախազգուշացմանը, որպեզզի տեղ փնտրեն Քո կողքին Քո Թագավորության մեջ:

Լսիր իմ աղոթքը, ով քաղցր Հիսուս, օգնելու Քեզ գրավել այն հոգիներին, որոնց դու տենչում ես:

Ով Սուրբ Սիրտ Հիսուսի, ես իմ հավատարմությունն եմ խոստանում Քո Ամենասուրբ Կամքին միշտ:

Ձեր Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Աղոթքի Խաչակրաց արշավանք (2) <<Աղոթք գլոբալ ղեկավարների համար>>

Ուրբաթ, 18 նոյեմբերի, 2011թ, երեկոյան ժ 09:00

Իմ սիրելի աղջիկ, այսօր Ես կոչ եմ անում Իմ հետևորդներին առաջարկել այս աղոթքը՝ փրկելու համար այն խեղճ զավակներին, ովքեր տանջանքի են ենթարկվում իրենց սեփական երկրների առաջնորդների կողմից, որոնց իրենց հերթին թելադրում են գլոբալ ուժերը, ոչ՝ Աստված:

<<Իմ Հավիտենական Հայր, հանուն Քո սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի, ես խնդրում եմ, որ Դու պաշտպանես Քո զավակներին այն հալածանքից, որը նյութվում է գլոբալ ուժերի կողմից անմեղ ազգերի դեմ:

Ես աղոթում եմ այն հոգիների մեղքերի թողության համար, ովքեր դժբախտության պատճառն են, որպեսզի նրանք կարողանան շրջվել դեպի Քեզ խոնարհ և ողջացող սրտերով:

Խնդրում եմ տուր քո տառապած զավակներին ուժը՝ դիմանալու համար այդպիսի տառապանքին հանուն աշխարհի մեղքերի քավության Քրիստոսի՝ մեր Տիրոջ միջոցով: Ամեն:>>

Աղոթքի Խաչակրաց արշավանք (3) <<Ազատել աշխարհը վախից>>

Կիրակի, 19 նոյեմբերի, 2011թ, երեկոյան ժ 07:00

Իմ սիրելի աղջիկ, Ես հիմա քեզ կտամ աղոթքը՝ աշխարհը վախից ազատելու համար:

<<Ոհ, իմ Տեր Հիսուս Քրիստոս, ես աղերսում եմ Քեզ ազատել աշխարհը այն վախից, որը խլում է հոգիներին Քո սիրող Սրտից:

Ես աղոթում եմ, որ հոգիները, ովքեր իրական վախ կզգան Նախազգուշացման ընթացքում, Կանգ առնեն և թույլ տան, որ Քո Գթասրտությունը հեղեղի իրենց հոգիները, որպեսզի նրանք ազատ լինեն սիրելու Քեզ այնպես, ինչպես պետք է սիրեն:>>

Ձեր Սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Աղոթքի Խաչակրաց արշավանք (4) <<Միավորել բոլոր ընտանիքները>>

Կիրակի, 20 նոյեմբերի, 2011թ, երեկոյան ժ 06:00

Աղջիկս, այս աղոթքը կարևոր է, քանի որ այն կօգնի ընտանիքների անդամներին միմյանց մոտ պահել, որպեսզի նրանք կարողանան մնալ որպես մեկ երկրի վրա Դրախտի Իմ Նոր Թագավորության մեջ:

Միավորիր բոլոր ընտանիքները, Հիսուս, Նախազգուշացման ժամանակ, որպեսզի նրանք ստանան հավիտենական փրկություն: Ես աղոթում եմ, որ բոլոր ընտանիքները մնան միասին Քեզ հետ միության մեջ, Հիսուս, որպեսզի նրանք ժառանգեն Երկրի վրա Նոր Դրախտը>>:

Ձեր Սիրող Փրկիչ

Մարդկության Ազատարար

Հիսուս Քրիստոս

Աղոթքի Խաչակրաց արշավանք (5) <<Գովաբանություն Ամենաբարձյալ Աստծուն>>

Երկուշաբթի, 21 նոյեմբերի, 2011թ, երեկոյան ժ 07:00

Աղջիկս, աշխարհը պետք է առաջարկի այս հատուկ աղոթքը ի գովաբանություն և շնորհակալություն Հայր Աստոծուն այն գթասրտության համար, որը նա ապահովում է ողջ աշխարհին:

<<Ոհ, Հավիտենական Հայր, մենք առաջարկում ենք Քեզ մեր աղոթքները ուրածխ շնորհակալությամբ Քո Գթասրտության թանկագին ընծայի համար՝ ողջ մարդկությանը:

Մենք ուրախանում ենք և առաջարկում ենք Քեզ՝ Ամենափառապանծ Թագավոր, մեր գովաբանությունն ու պաշտամունքը Քո սիրող և քնքուշ գթասրտության համար:

Դու, Ամենաբարձրյալ Աստված, մեր Թագավորն ես, և այս ընծայի համար, որը Դու հիմա բերում ես մեզ, մենք ընկնում ենք Քո ոտքերի առջև խոնարհ ծառայությամբ:

Խնդրում եմ, Աստված, գթա Քո բոլոր զավակներին>>:

Ձեր Հիսուս

Աղոթքի Խաչակրաց արշավանք (6) <<Աղոթք Հակաքրիստոսին կանգնեցնելու համար>>

Երեքշաբթի, 22 նոյեմբերի, 2011թ, առավոտյան ժ 11:00

<<Ոհ, Հիսուս, ես աղոթում եմ, որ Աստված Իր գթասրտությամբ կարգելի Հակաքրիստոսին և նրա ստոր բանակին Քո զավակներին սարսափի մատնելուց և նրանց վրա դժբախտություններ պարտադրելուց:

Մենք աղոթում ենք, որ նրան կանգնեցնես, և որ երկնային պատժի ձեռքից խուսափենք Նախազգուշացման ժամանակ առաջացած դարձի միջոցով>>:

Աղոթքի Խաչակրաց արշավանք (7) <<Աղոթք նրանց համար, ովքեր մերժում են Գթասրտությունը>>

Երեքշաբթի, 22 նոյեմբերի, 2011թ, երեկոյան ժ 08:00

Աղոթք նրանց համար, ովքեր մերժում են Գթասրտությունը

Իմ սիրելի աղջիկ, Իմ ժամանումը, մարդկությանը մեկ անգամ ևս փրկելու համար նախքան վերջնական դատաստանը, այնքան մոտ է: Իմ ուրախությունը խառնված է խորը տառապանքով այն հոգիների պատճառով, ովքեր կմերժեն Իմ Գթասրտությունը:

Դու, աղջիկս, պետք է պայքարես Իմ խաչի սիրելի զավակների բանակի հետ միասին նրանց հոգիները փրկելու համար: Սա է այն աղոթքը, որը նրնաք պետք է ասեն՝ գթություն խնդրելու համար խավարում գտնվող հոգիների համար:

<<Հիսուս, Ես պարտադրում եմ Քեզ, որ ներես այդ մեղավորներին, որոնց հոգիներն այդքան խավար են, ովքեր կմերժեն Քո գթասրտության լույսը:

Ներիր նրանց, Հիսուս, ես աղերսում եմ Քեզ, որպեսզի ազատագրես նրանց այն մեղքերից, որոնցից նրանք այդքան դժվարանում են դուրս գալ:

Ողողիր նրնաց սրտերը Քո գթասրտության ճառագայթներով և թույլ տուր նրանց հնարավորությունը՝ վերադառնալ դեպի Քո հոտը>>:

Ձեր Սիրող Հիսուս

Աղոթքի Խաչակրաց արշավանք (8) Խոստովանությունը

Երեքշաբթի, 22 նոյեմբերի, 2011թ, երեկոյան ժ 10:30

Ես՝ Հիսուսը, ձեր Թագավորն ու Փրկիչը, հիմա ներկայացնում եմ խոստովանության Իմ աղոթը:

Այս աղոթքը պետք է ասվի, հայցելու համար մեղմություն՝ մեղքի թողության համար Նախազգուշացման ժամանակ և դրանից հետո:

**<<Թանկագին Հիսուս, ես հայցում եմ Քո ներողամտությունը իմ բոլոր մեղքերի համար և այն վիրավորանքի ու վերքերի համար, որոնք ես պատճառել եմ ուրիշներին:
Ես խոնարհաբար խնդրում եմ շնորհները, որ խուսափեմ Քեզ կրկին վիրավորելուց և առաջարկեմ քավություն ըստ Քո ամենասուրբ կամքի:**

Ես աղերսում եմ ներողամտություն զալիք ցանկացած վիրավորանքի համար, որին ես կմասնակցեմ և որը Քեզ ցավ և տառապանք կպատճառի:

Վերցրու ինձ Քեզ հետ Խաղաղության նոր դարաշրջան, որ ես դառնամ քո ընտանիքի մասը հավիտյան:

Ես սիրում եմ Քեզ Հիսուս:

Ես Քո կարիքն ունեմ:

Ես պատվում եմ Քեզ և այն ամենն ինչ Դու պաշտպանում ես:

Օգնիր ինձ, Հիսուս, որպեսզի ես արժանի դառնամ մտնել Քո Թագավորություն>>:

Ձեր Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Աշխարհն ընդմիշտ կփոխվի

Հինգշաբթի, 24 նոյեմբերի, 2011թ, երեկոյան ժ 09:00

Իմ սիրելի աղջիկ, մի վախեցիր, քանի որ ժամանակը հասել է քեզ և ողջ աշխարհի վրա:

Այս ուղևորությունը լարված էր քեզ համար, աղջիկս, այն ամենի համար, ինչ եղավ այսքան կարճ ժամանակում:

Դու ենթարկվել ես Իմ Սուրբ Կամքին ամենասկզբից ի վեր, չնայած կասկածներ ունեիր: Չնայած դու ծաղրի ենթարկվեցիր որոշ մասերում և հատկապես նրանց կողմից, ովքեր իրենց համարում են Իմ և Իմ սիրելի Մոր սուրբ աշակերտները, դու

երբեք չտատանվեցիր հասցնելու համար աշխարհին Իմ Ամենասուրբ Խոսքը: Անտեսիր այդ ողջ վիրավորանքը, քանի որ դա անցյալ է արդեն:

Հիմա, երբ Ես գալիս եմ Իմ մեծ գթասրտությամբ, ճշմարիտ հավատ ունեցող Իմ բոլոր զավակները խոնարհ շնորհակալությամբ ծնկի կգան՝ Ինձ ողջունելու և Իմ գթասրտությունը ընդունելու համար: Ճշմարտությունը հիմա կբացահայտվի:

Բարձրացեք դուք բոլորդ և ուրախությամբ սպասեք Իմ ժամանմանը:

Աշխարհն ընդմիշտ կփոխվի:

Հիշեք, ձեր բոլորիդ հանդեպ, այդ թվում նաև նրանց՝ ովքեր ծաղրում են Իմ սուրբ խոսքը կամ մերժում Ինձ, տածած Իմ խորը սիրո պատճառով է, որ Ես գալիս եմ ձեզ մեկ անգամ ևս փրկելու:

Ձեր Փրկիչ և Ազատարար

Հիսուս Քրիստոս

Ես ամսաթվեր չեմ բացահայտում

Կիրակի, 27 նոյեմբերի, 2011թ, ցերեկվա ժ 03:00

Իմ սիրելի աղջիկ, դու պետք է հանգիստ մնաս և զուսպ և դնես քո ամբողջ վստահությունն Ինձ վրա:

Նախազգուշացման ժամանակը համարյա հասել է, և դու պետք է համբերատար լինես: Աղոթիր, աղջիկս, որ ողջ մարդկությունը կարողանա փրկվել Իմ ընծայի միջոցով:

Խնդրում եմ ենթադրություններ մի արա ամսաթվի մասին, քանի որ Ես ամսաթվերը չեմ բացահայտում:

Նրանք ձեր գիտենալու համար չեն: Համբերատար եղեք: Նախազգուշացման ժամանակը կլինի Իմ Սուրբ Կամքին համապատասխան:

Դրեք ձեր ողջ վստահությունն Ինձ վրա և թողեք ամեն ինչ Իմ ձեռքերում:

Ձեր սիրող Հիսուս

Քայլեք Իմ կողքով, և ձեզ վրա կթքեն

Երկուշաբթի, 28 նոյեմբերի, 2011թ, երեկոյան ժ 08:00

Իմ սիրելի աղջիկ, դու պետք է հիշես, որ երբ ծառայում ես Ինձ, քո կյանքը միշտ կլինի փշերի պսակ:

Ոչինչ հեշտ չի լինի, սակայն իմացիր, որ եթե դու ընտրյալ հոգի ես, դա առանց զոհաբերության չի լինում: Այս ճամփորդության ընթացքում, որ դու ձեռնարկել ես Իմ կողքով քայլել՝ քեզ վրա կթքեն, կսխալեցնեն, կծաղրեն, կհարվածեն և կտանջեն երբ դու ամենաքիչն ես դա սպասում: Բոլոր նրանք, ովքեր բացահայտորեն հռչակում են Իմ խոսքը, նրանք նույնպես կտառապեն այդ նույն վիրավորանքներից:

Այնուամենայնիվ, մինչև չընդունեք այդ ստորացումներն ու փորձությունները որպես այն խաչի մի մասը, որը կրում եք երբ ընտրում եք աշխատել Ինձ համար, դուք չեք հասունանա դեպի ձեզնից ակնկալվող հոգևոր կատարելություն:

Ընդունիր, աղջիկս, ստորացումները, ցավը և տառապանքը, որոնք գալիս են քո ճանապարհին: Վստահորեն, մինչ այժմ դու և Իմ բոլոր սիրելի զինվորները, ովքեր ընդունում են Իմ ամենասուրբ ցուցումներն այս պատգամների միջոցով, պետք է արդեն գիտենայիք, որ այդ Ես եմ քայլում ձեր կողքով:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Կույս Մարիամ. Իմ ընծան՝ հաղթելու և ոչնչացնելու Օձին

Երեքշաբթի, 29 նոյեմբերի, 2011թ, երեկոյան ժ. 09:00

Զավակս, ասա Իմ սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի բոլոր հետևորդներին, որ իրենք պետք է փնտրեն Իմ պաշտպանությունը միշտ: Սատանայի օրերն արագորեն հասնում են իրենց վերջին, և շատ զավակներ են խոցելի նրա գայթակղությունների հանդեպ:

Ինձնից պաշտպանություն և Իմ առանձնահատուկ շնորհները խնդրելով՝ Սատանան չի վնասի Իմ զավակներին կամ էլ հեռացնի նրանց Իմ Որդուց:

Այսօր յուրաքանչյուր ոք Սատանայի թիրախ է դարձել, մինչ նա թափառում ամենուր, փնտրելով հոգիների կործանումը: Նրա հարձակումներն ամենաչարն են, երբ դուք Աստծո նվիրյալ հետևորդներ եք և ունեք ուժեղ հավատ: Նրա ատելությունն այդպիսի հոգիների հանդեպ առաջացնում է ցավ և խառնաշփոթություն այդ հոգիներին:

Նա՝ խաբեբան, միայն մեկ նպատակ ունի, և այդ նպատակը բոլոր հոգիներին նվաճելն է, որպեսզի նրանք հետևեն իրեն, և ինքը ոչնչացնի այդ հոգիների հավիտենական փրկության հնարավորությունները:

Աղոթեք յուրաքանչյուր ազատ պահի, որ կարող եք գտնել, չարի դեմ Իմ պաշտպանության համար: Իմ Երկնավոր Հայրն Ինձ տվել է օձին հաղթելու և ոչնչացնելու մեծ ընծան:

Երբ դուք շրջվեք դեպի Ինձ օգնության համար, Ես միշտ կօգնեմ ձեզ, որ ետ դառնաք դեպի Իմ Որդին այն սփսփանքի համար, որը դուք հուսահատորեն փնտրում եք, և որը կհանգստացնի ձեր հոգին:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք և ասեք Իմ Սուրբ Վարդարանը, քանի որ այն ամենահզոր զենքն է, Սատանային հեռու պահելու, որպեսզի չոչնչացնի ձեր կյանքը:

Շնորհակալ եմ, որ արձագանքեցիր Իմ կոչին, զավակս, քանի որ Ես պետք է հիշեցնեի քեզ Իմ օգնությունը փնտրելու հրատապության մասին, քանի որ գտնվում ես կատաղի հարձակման տակ քո առաքելության այս էտապում:

Գնա խաղաղությամբ: ՁԵր Երկնային Մայր

Մարիամ Երկնքի Թագուհի

Ես կփրկեմ ձեզ ձեր աշխարհի սարսափներից

Չորեքշաբթի, 30 նոյեմբերի, 2011թ, ցերեկվա ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, նրանք ովքեր այնքան ցանկանում են ապացուցել իրենց սերն Իմ հանդեպ, հաճախ հուսահատություն են գտնում իրենց հոգիների մեջ, որը նրանց Իմ սիրուց դատարկված է թվում: Դա կարող է լինել այնքան անսպասելի, որ կարող է հոգուն թողնել լքվածության այնպիսի վիճակի մեջ, որ հոգին զգում է ասես երբեք չի վերականգնվի անօգնականության և հավատի պակասի զգացողություններից:

Մի վախեցեք, զավակներս: Լքվածություն դուք կզգաք, երբ դուք մոտ եք Ինձ: Ես զգացել եմ այդ նույն լքվածությունը երբ դեռ երկրի վրա էի, Իմ Սիրելի Հոր կողմից: Ես կորած և միայնակ էի զգում, մինչ փորձում էի հաղորդակցվել Նրա հետ բազմաթիվ անգամներ: Սա ուժեղ փորձություն է, որով դուք կտառապեք, երբ Աստծո ճշմարիտ հետևորդ եք: Դա սատանայի ձևն է՝ ձեզ հեռու քաշելու, այնպես, որ որոշ ժամանակ անց նա հույս ունի որ դուք կդադարեք Ինձ փնտրել և կընկնեք աշխարհիկ ուղիների մեջ, որոնք կզվարճացնեն, բայց բավարարվածություն չեն պատճառի:

Մի՞թե չգիտեք, որ աղոթքը կկանխի դա տեղի ունենալուց: Մի՞թե չեք հասկանում, որ Ես դա թույլ եմ տալիս ձեր սեփական լավի համար և որպես ձեր ուսուցման մի մասը, որպեսզի հոգևոր ուժ ձեռք բերեք, որին հասնում են միայն այդ լքվածության միջոցով:

Իմ Հոր ուղիները դժվար հասկանալի են ձեզ համար, զավակներս: Պարզապես վստահեք Ինձ՝ ձեր Հիսուսին, և կանչեք Ինձ, որ տամ ձեզ այն շնորհները, որոնց կարիքը դուք ունեք Ինձ հետ մարտնչելու համար՝ փրելու ձեր եղբայրներին և քույրերին: Նրանք պետք է փրկվեն այն չար պլաններից, որոնք նյութվում են աշխարհում այն ուժերի կողմից, ովքեր փնտրում են վերահսկել ձեզ հենց այն բաների միջոցով, որոնք կարիքը դուք ունեք՝ որպեսզի գոյատևեք:

Հիշեք, զավակներս, Ես այնքան մոտ եմ Իմ բոլոր հետևորդներին, որ երբ Նախազգուշացումը տեղի ունենա, Իմ բանակն անմիջապես կներխուժի՝ դառնալու համար Սատանայի հզոր հակառակորդը:

Հույսը, զավակներս, երբեք չպետք է կորցնել: Ես կփրկեմ ձեզ ձեր աշխարսի սարսափներից, որն ամբողջական անկարգության մեջ է՝ Իմ Հավիտենական Հոր հանդեպ հավատի պակասությունից առաջ եկած:

Այս ամենը շուտով կփոխվի, երբ աշխարհն ականատես լինի այն ապացույցին, որի կարիքն ունի ընդունելու համար Հայր Աստծո գոյությունը:

Ձեր Հիսուս

Մարդկության Փրկիչ

Աղոթքի Խաչակրաց արշավանք (9) <<Տառապանքի առաջարկումը որպես ընծա>>

Երկուշաբթի, 28 նոյեմբերի, 2011թ, երեկոյան ժ 08:30

Ով Հիսուսի Ամենասուրբ Սիրտ,

Սովորեցրու Ինձ ընդունել վիրավորանքները հանուն Քո Սուրբ Անվան, երբ Ես հռչակեմ Քո խոսքը խոնարհ շնորհակալությամբ:

Սովորեցրու Ինձ հասկանալ թե ինչպես են խորնարհության ցավն ու տառապանքը ինձ ավելի մոտեցնում Քո Սուրբ Սրտին:

Թույլ տուր ինձ ընդունել այդպիսի փորձությունները սիրով և մեծահոգությամբ, որպեսզի ես ներկայացնեմ դրանք որպես Քեզ համար այնքան թանկարժեք ընծաներ, որ դու հոգիներ փրկես:

Աղոթքի Խաչակրաց արշավանք (10) <<Կրել Քո սիրո բոցը>>

Երեքշաբթի, 29 նոյեմբերի, 2011թ, ցերեկվա ժ 03:35

Օգնիր ինձ, սիրելի Հիսուս, որ անվախորեն բարձրանամ՝ Քո անվամբ տանելու համար Քո սիրո բոցը բոլոր ազգերին:

Տուր մեզ, քո զավակներին, զորությունը՝ դիմանալու համար մեղադրանքին, որի դեմ կկանգնենք բոլոր նրանց մեջ, ովքեր Քո գթասրտության ճշմարիտ հավատացողներ չեն: Ամեն:

Աղոթքի Խաչակրաց արշավանք (11) <<Դադարեցնելու համար տեսանողների հանդեպ ատելությունը>>

Չորեքշաբթի, 30 նոյեմբերի, 2011թ, երեկոյան ժ 08:00

Ով Սուրբ Սիրտ Հիսուսի, խնդրում եմ դադարեցրու այն ատելությունն ու նախանձը, որը գոյությունունի Քո հետևորնդենրի մեջ այս ժամանակի Քո ճշմարիտ տեսանողների հանդեպ:

Ես աղոթում եմ, որ Դու լսես, իմ աղոթքը՝ տալու համար Քո տեսանողներին այն ուժը, որի կարիքը նրանք ունեն՝ հոչակելու համար Քո ամենասուրբ խոսքը չհավատացող աշխարհին: Ամեն: